



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Եթե չի մարել կամքն ու վճռականությունը

ՀՀ Դաշնակցության Ընդհանուր ժողովը համարվում է կուսակցության կարեւորագույն բարձրագույն ժողովը, որտեղ ձեւավորվում է ՀՀ-ի ուղենիշն ու կամքը առաջիկա քառամյակի համար: ՀՀ Ընդհանուր ժողովին մասնակցում են կուսակցության բոլոր կառույցների պատգամավորներն ու ժողովին հրավիրյալ պատասխանատու եւ փորձառու կուսակցականներ: Ինչպես գիտենք, ՀՀ-ն միակ համահայկական կառույցն է, որի կազմակերպական ցանցը իր մեջ ընդգրկում է ավելի քան 30 երկրներում առկա հայկական համայնքներ: Այս առումով, Ընդհանուր ժողովը մի բացառիկ հարթակ է, որում պարփակվում է աշխարհի տարբեր անկյուններում սփռված հայության քաղաքական միտքն ու առօրյան:

Այսպիսով, ՀՀ Ընդհանուր ժողովը ոչ միայն ներկուսակցական կարեւոր իրողություն է, այլ նաեւ հայ քաղաքական մտքի արտահայտման առումով յուրահատուկ կարեւորություն ունի: Հայ իրականության մեջ քաղաքական մտքի կուտակման, վերլուծության եւ որոշումների ընդունման համահայկական այլ հարթակ առայժմ գոյություն չունի:

Ինչպես արդեն հայտնի է, ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովի հայտարարության մեջ կայացրած որոշումների եւ ռազմավարական ուղղությունների առանցքային բաժիններից մեկը եղել է Արցախը: Արցախյան 44-օրյա աղետալի եւ կորստաբեր պատերազմը անկյունաքար-ձային նշանակություն է ունեցել ոչ միայն Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների համար, այլ նաեւ համայն հայության տեսլականների ու իդեոլոգիայի նկատմամբ՝ ստեղծելով հուսալքության, անճարակության մթնոլորտ:

ՀՀ-ն ավելի քան 130 տարի լինելով ազգային ազատագրական պայքարի դրոշակակիր, չի կարող անտարբեր լինել Արցախում եւ Հայաստանում տիրող կացության նկատմամբ: Արցախն այսօր մարմնավորում է հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը:

ՀՀ-ի համոզմամբ՝ Արցախի հարցի այսօրվա կարեւորագույն ուղղությունը պետք է դառնա ժողովրդին իր հողի վրա պահելու ուղղությամբ տարվող շանքերն ու գործնական քայլերը: Այս առումով, Դաշնակցությունն իր ներուժն ի գործ է դնելու՝ ապահովելու ներդրումներ եւ սոր մոտեցումներ Արցախում կենցաղային հարցերը լուծելու, կայունություն ու զարգացում ապահովելու եւ ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու համար:

Մյուս կողմից, ՀՀ Հայ դատի գրասենյակները առավել շեշտակի թափով միջազգային քաղաքական ասպարեզում արթուն դրոշակակիրն են լինելու Արցախյան հարցի:

Կեղծ խաղաղության եւ հաշտության կոչերը վաղ թե ուշ ապացուցելու են իրենց սնանկությունը, իսկ մինչ այդ ՀՀ-ն իր համաշխարհային կառույցով հանդերձ համոզված է, որ հայ ժողովրդի անժամանցելի իրավունքները սակարկության առարկա չեն կարող դառնալ: Այդ իրավունքները չեն կարող զիջվել կեղծ խաղաղության եւ հաշտության շղարշով պատված գերպետական դավադիր պայմանավորվածություններին:

Եվ, ի վերջո, Դաշնակցությունը համոզված է, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունների հեռացումը հայ ժողովրդի ազգային ուժերի միասնական առաջնահերթ օրակարգը պետք է դառնա: Ապագային քաղաքականություն վարող ՀՀ իշխանությունները պատուհաս են եւ նրանցից օր առաջ ազատումը կանգնեցնելու եւ սոր աղետների շարանը:

Այս համոզումներն ի մի են բերվել իննօրյա կարծիքների բախման եւ գաղափարների բյուրեղացման արդյունքում: Իրենց մեջ պարունակում են աշխարհասփյուռ յուրաքանչյուր հայ համայնքի շունչը եւ, անկասկած, կիրառործվեն, եթե ազգային մտածողություն ունեցող հայ մարդու մեջ դեռեւս չի մարել կամքն ու վճռականությունը:



ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքները

2022 թ. մարտի 8-ին Հայաստանում գումարված ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքները: Այն մեկնարկել էր փետրվարի 28-ին: Ժողովի օրակարգը բխում էր հայրենիքի եւ հայության առջեւ ծառայած ներազգային, միջազգային եւ տարածաշրջանային մարտահրավերներից, որոնց շուրջ ծավալվեցին խորքային քննարկումներ, ճշտվեցին հաջորդ քառամյակի ՀՀ քաղաքական ուղեգիծն ու ռազմավարությունը եւ կայացվեցին որոշումներ Հայ դատի, արտաքին եւ ներազգային ուղղություններով աշխատանքների, քարոզչական եւ տնտեսական քաղաքականության վերաբերյալ:

Ժողովը քննեց եւ գնահատեց շրջանավարտ ՀՀ Բյուրոյի եռամյա գործունեությունը, ներկայացրեցին ինքնադիմերն ու անելիքները:

Ընդհանուր ժողովն իր օրակարգը սպառելուց հետո ընտրեց կուսակցության բարձրագույն մարմին՝ Բյուրո:

ՀՀ Բյուրոն իր անդրանիկ նիստում ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ ընտրեց Հակոբ Տեր-Խաչատուրյանին:

- ՀՀ Բյուրոյի անդամներն են՝
- Վիգեն Բաղումյան (Իրան)
- Դավիթ Իշխանյան (Արցախ)
- Արսեն Համբարձումյան (Հայաստան)
- Կիրո Մանոյան (Հայաստան)
- Մկրտիչ Մկրտիչյան (Լիբանան)
- Խաժակ Մկրտիչյան (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
- Արմեն Ռուստամյան (Հայաստան)
- Հովսեփ Տեր-Գեորգյան (Եվրոպա)
- Ռաֆֆի Տոնապետյան (Կանադա)
- Մուրադ Փափազյան (Եվրոպա)

ՀՀ Բանրային կապերի գրասենյակ
08 մարտ, 2022 թ.
Դիլիջան

ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովի հայտարարությունը

Սույն թվականի փետրվարի 28-ից մինչեւ մարտի 8-ը Հայաստանում տեղի ունեցավ ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովը:

Աշխարհի շուրջ 30 երկրներից ժամանած 100 պատվիրակները քննարկեցին եւ արժեւորեցին համահայկական կառույցի հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը, ուղենշեցին ՀՀ առաջիկա քառամյակի ռազմավարությունը՝ որդեգրելով քաղաքական գործունեության առաջնահերթություններն ու հիմնական ուղղությունները:

Ժողովն արձանագրեց, որ.

- Ողջ հայությունը, Հայաստանի եւ Արցախի հանրապետությունները, հայտնվել են մեր նորագույն պատմության ճակատագրական փուլերից մեկում, որն աննախադեպ սպառնալիքներ է ստեղծել Հայաս-

տանի ինքնիշխանության եւ անվտանգության համար:

- ՀՀ իշխանությունների որդեգրած ապագային քաղաքականությունը, արտաքին եւ ներքին ճակատներում առաջ եկած մարտահրավերներին անհամարժեք արձագանքն ու սխալ գործողությունները հանգեցրել են 44-օրյա աղետալի եւ կորստաբեր պատերազմի՝ Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների համար ստեղծելով լինելիության վտանգ:

- ՀՀ իշխանությունները խորացրել են ներազգային պառակտումներն ու ջրբաժանները, որոնք ուղեկցվում են քաղաքական հետապնդումներով, բանտարկություններով եւ ճնշումներով: Փլուզված է Հայաստանի անվտանգային ողջ համակարգը, կազմաքանդվում են պետական եւ ժողովրդավարական ինստիտուտները:

ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովի հայտարարությունը

1 ← - Սփյուռքը բազմաթիվ աշխարհաքաղաքական, տնտեսական, ընկերային պայմաններով թելադրված՝ համազգային պառակտման եւ հատկապես 44-օրյա պատերազմում պարտությունից եւ հետպատերազմյան զարգացումներից հետո գտնվում է հուսալքության, ահռելի դժվարություններ հաղթահարելու եւ էլքերի փնտրտուքի փուլում, որը հարկ է հունավորել ու արդյունավորել:

- Տարածաշրջանում ակտիվացել է թուրքադրքեջանական տանդեմը, իսկ Հայաստանի իշխանությունները դադարել են լինել Արցախի Հանրապետության եւ արցախահայության անվտանգության երաշխավորը:

ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովը հաստատեց, որ.

- Ստեղծված իրավիճակը եւ հայկական զույգ պետությունների վտանգված հեռանկարը հնարավոր է բեկել հայ ժողովրդի վճռական կամքով, Հայաստան-Սփյուռք-Արցախ եռամիասնական ներուժով:

- Հայության ներուժի, ազգային արժեքների նահանջի պայմաններում Դաշնակցությունը պարտավոր է ստանձնել ազգային նպատակներ բաժանելու, ապագային իշխանություններին երկրի ղեկավարումից հեռացնելու գործընթացի որոշիչ դերակատարությունը:

- Սփյուռքը իբրեւ գլխավորաբար Հայոց ցեղասպանության ծնունդ, Արեւմտահայաստանի կորուստի

արդյունք եւ արեւմտահայերենի պահպանման կռվան՝ ռազմավարական նշանակություն ունի հայության մղած պայքարի համար: Անհրաժեշտ է նոր ավյուն ներարկել Սփյուռքի առավել կազմակերպման եւ համահայկական քաղաքական նպատակների իրականացման պայքարին:



- Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների հնարավոր հաստատումը չի կարող լինել ի հաշիվ Հայաստանի, Արցախի եւ համայն հայության օրինավոր եւ անժամանցելի իրավունքների:

- Արցախում ստեղծված նոր կացությունը անհրաժեշտություն է առաջացնում պայքարի նոր մոտեցում-

ների եւ ռազմավարության որդեգրման՝ մեկնակետ ունենալով արցախահայության ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացումը:

- ՀՀ-ն իր ողջ ներուժով, համահայկական կառույցի կարողակալությամբ եւ նվիրումով ձեռնամուխ է լինելու Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների անվտանգության, տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, կայունության ու զարգացման ապահովման եւ ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ու ընկերային արդարության հաստատման աշխատանքներին:

- ՀՀ-ն հավատարիմ Հայ դատի պայքարին՝ հանդես է գալու ցանկացած գործընթացի դեմ, որը կհակասի 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված ՀՀ անկախության եւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին հրապարկված համահայկական հռչակագրերին:

- Ապագային քաղաքականություն վարող եւ երկրին ծանր կորուստների բերած իշխանությունների հեռացումն առաջնահերթ օրակարգ է, եւ կուսակցությունը շարունակելու է ընդլայնել հունավորվող ազգային դիմադրության շար-

ժումը: ՀՀ-ն իր համահայկական կառույցով եւ համակիրների աջակցությամբ վճռական է՝ իրականացնելու որդեգրած ուղեգիծն ու ռազմավարությունը:

ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողով
8 մարտ, 2022

Այսօրվա իշխանությունները հանդես չեն գալիս՝ որպես Արցախի անվտանգության երաշխավոր

Մարտի 10-ին ՀՀ Բյուրոյի գրասենյակում տեղի ունեցավ ՀՀ Նորընտիր Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանի եւ ՀՀ Բյուրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանի մամուլի ասուլիսը:

«ՀՀ 34-րդ Ընդհանուր ժողովը գումարվեց այնպիսի շրջանում, երբ Հայաստանն ու Արցախը ճգնաժամ են ապրում: Վերջին երեք տարիները մեր պատմության մեջ դժվարագույն տարիներն էին, մեծ մարտահրավերների առջեւ կանգնեց ամբողջ հայ ժողովուրդը»,- նշեց Նորընտիր ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը:

«Այդ ցնցումը ստեղծեց հուսահատության ալիք, պարտվածի հոգեբանություն, որը պետք է թողնաքի, ամեն զնով փակել այդ էջը եւ գնալ առաջ: Մեզ սպասվում են նույնքան դժվար՝ եթե ոչ ավելի տարիներ, որոնք կարող են ճակատագրական լինել: Այդ առումով, ՀՀ Ընդհանուր ժողովը նշեց, որ այս իշխանությունների վարած ապագային քաղաքականությունը հանգեցրել ու հանգեցնում է հավելյալ պառակտումների: Այդ պառակտումը տեղափոխվել է Սփյուռք, որը շատ ցավալի է:

Մենք պատրաստ ենք մեր բաժինն անելու, եւ հայտարարել ենք, որ անհրաժեշտություն է համահայկական կառույցների, մեր երկու կաթողիկոսությունների հետ ստեղծել այնպիսի ֆորում, որ նաեւ նպաստի Սփյուռքի համախմբմանը:

Նրա խոսքով՝ այսօրվա իշխանությունները հանդես չեն գալիս որպես Արցախի եւ արցախահայության անվտանգության երաշխավոր: «Սա շատ ցավալի երեւոյթ է, որովհետեւ անցյալում միշտ շեշտել ենք, որ այդ երաշխավորությունը պետք է տա Հայաստանը: Նույնիսկ նշել ենք, որ եթե անկախության ճանաչման ընթացքը չկարողանա ամբողջականացնել Հայաստանը, պետք է նվազագույնը՝ ունենա ռազմաքաղաքական դաշինք Արցախի հետ: Այսօր իշխանությունները երբեմն նույ-

նիսկ խուսափում են այդ հարցից, խուսափում են նույնիսկ Հայ դատի հետապնդումից՝ փորձելով այդ պատասխանատվությունը դնել միայն Սփյուռքի ուսերին»,- ասաց Տեր-Խաչատուրյանը: «Ադրբեջանն էլ երկակի խաղ է խաղում: Բնական է, որ Ռուսաստանը չի ուզում կորցնել Ադրբեջանը, բայց նաեւ ակնհայտ է, որ նա ուղղակի կապի մեջ է Ուկրաինայի իշխանությունների հետ, եւ փոխադարձաբար Ուկրաինայի իշխա-



նությունները Արցախյան պատերազմի ժամանակ գինամթերք են հասցրել Ադրբեջան: Այս պատճառով պետք է զգուշավորությամբ մոտենալ խնդրին, որովհետեւ ինչ էլ լինի էլքը՝ անպայմանորեն ունենալու է իր ազդեցությունը տարածաշրջանի վրա»,- ասաց Հակոբ Տեր-Խաչատուրյանը:

34-րդ ժողովը կմնա մեր պատմության մեջ ոչ միայն որպես Ընդհանուր ժողով, այլ նաեւ Արտակարգ ժողով, որովհետեւ գումարվում էր աննախադեպ սրված եւ լարված իրավիճակում՝ իր խոսքում նշեց Արմեն Ռուստամյանը: «Հայաստանին եւ հայությանը սպառնացող վտանգներն այն աստիճանի ծանր են եւ ծավալն այնքան է մեծացած, որ այստեղ իսկապես խոսքը մեր լինելիության հետ կապված հարցերի առու-

մով մեր գործողությունների մասին է»,- ասաց նա:

Արմեն Ռուստամյանը նշեց, որ Դաշնակցությունը, իր առաքելությանը համապատասխան, լինելով այն բաց նյարդն զգացող կուսակցությունը, թե որտեղից են գալիս մեր հիմնական վտանգները, հստակ արձանագրում է, որ իրականում մենք կանգնած ենք շատ օրհասական խնդիրների լուծման հրամայականի առջեւ:

«Մենք ունենք թե՛ ներքին, թե՛ արտաքին լրջագույն վտանգներ, եւ, բնականաբար, խնդիր ունենք թույլ չտալու, առնվազն կասեցնելու այնպիսի զիջումները, որոնք կենսական նշանակություն կունենան մեր ապագայի համար»,- ասաց նա: «Զիջումների «կարմիր գծերը» չարձանագրելու պարագայում մենք իսկապես Արցախը եւ Հայաստանը կորցնելու վտանգի առջեւ ենք: Սա չափազանցություն է, սա իրական վիճակի վերլուծություն է: Ակնհայտ է, որ Ադրբեջանի ցանկությունը Արցախն է առանց հայերի, եւ ամեն ինչ անելու են, որ արցախահայությունը, անելանելիության մեջ հայտնվելով, այդ տարածքները լքի: Լարվածությունը դրա դրսեւորումն է, եւ սա պետք է ահազանգ հանդիսանա»,- ասաց Ար-

մեն Ռուստամյանը:

«Բայց ես այսօր լսում եմ վարչապետի խոսքերը, որը խնդրին անդրադառնում է հպանցիկ, ասում է՝ չեմ ուզում գնահատական տալ: Այսինքն, ինչո՞ւ չպիտի գնահատվի, ինչո՞ւ չպիտի ահազանգ հնչեցվի, ինչո՞ւ չպիտի ասվի, որ դրա դեմն առնելու համար ամեն ինչի պատրաստ են: Այսինքն, այս կրավորական պահվածքը, հանուն խաղաղության ամեն ինչ զիջելու պատրաստակամությունը բերելու է նրան, որ մենք լինել-չլինելու խնդրի առջեւ ենք հայտնվելու»,- ասաց Արմեն Ռուստամյանը:

Նրա համար ակնհայտ է, որ թուրքադրքեջանական տանդեմը փորձում է ամեն ինչ անել, որ ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքներից ստանա առավելագույնը:

«Եվ քանի դեռ Հայաստանը չի վերագտել իր մարտունակությունը, իր անվտանգային համակարգերը չի ամրապնդել, այո՞, մենք ամեն օր ականատեսն ենք լինելու նրան, որ կեղծ են այդ բոլոր ցանկությունները՝ խաղաղություն հաստատել, համագործակցության դաշտ առաջացնել: Ո՛չ, նրանք ինչ հնարավոր է «պոկեն» մեզսից՝ անելու են»,- ասաց նա:

Արմեն Ռուստամյանը նշեց, որ այսօր հիմնական ուժը, որ այստեղ ապահովում է խաղաղություն, ռուսական խաղաղապահ ուժերն են: «Վատ է, իհարկե, որ Հայաստանն այլեւ չի հանդիսանում Արցախի եւ արցախահայության անվտանգության երաշխավորը: Սա տեսնում են նաեւ մեր հարեւանները, տեսնում են, որ այդ ուղղությամբ որեւէ քայլ Հայաստանը չի կատարում՝ վերագտնելու անվտանգության երաշխավորի իր կարգավիճակը, եւ դրանից բխող քայլեր չի կատարում, եւ համարում է, որ այսօր հնարավոր է եւս մի տարածք վերցնել՝ աշխարհաքաղաքական իր խնդիրները լուծելու, արցախահայությանը անելանելի վիճակում դնելու, որ օր առաջ լքեն այդ տարածքները»,- նշեց Արմեն Ռուստամյանը:

Տարեկի ԱՐԱՁԱՆՅԱԼ

Վերջին շրջանում նշանակվում են դիվանագիտական փորձ չունեցող դեսպաններ

ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեն մարտի 10-ին հանդիպում է ունեցել ՀՀ Դաշնային Եվրոպայի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանի եւ ՀՀ Զուսմաստանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հռիփսիմե Հարությունյանի հետ: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ ՀՀ Բյուրոյի Հայ դատի Կենտրոնական գրասենյակի հատուկ ծրագրերի պատասխանատու Գեորգ Ղուկասյանը: ՀՀ Արցախի ԿԿ-ն ներկայացրել է Արցախում տիրող իրավիճակը, անվտանգային եւ հումանիտար հիմնախնդիրները: Մտքեր են փոխանակվել օտարերկրյա քաղաքական շրջանակներում, մասնավորապես՝ Եվրոպական երկրներում ի նպաստ Արցախի աշխատանք ծավալելու կապակցությամբ:

Հյուրերը տեղեկացրել են իրենց այցելության ընթացքում Արցախի պետական պաշտոնատար անձանց հետ ունեցած հանդիպումների եւ ձեռքբերված պայմանավորվածությունների մասին:

«Բավական երկար ժամանակ Արցախ չէի այցելել, եւ եկա, որպեսզի տեղում տեսնեմ կացությունը, խորհրդակցություններ ունենամ պետական պատասխանատուների հետ, Արցախին օգտակար լինելու նոր հնարավորությունները քննարկենք: Գոհ եմ այցելությունից, որովհետեւ իմացա բաներ, որոնք առանց այստեղ լինելու չէի իմանա: Անկեղծ խոսակցություն ունեցա բոլորի հետ», - «Ապառաժ»-ի հետ զրույցում այցի մասին պատմում է Գասպար Կարապետյանը: Նախքան վերջին պատերազմը՝ ՀՀ Եվրոպայի Հայ դատի գրասենյակը տարին մի քանի անգամ քաղաքական ու հասարակական գործիչներին, լրագրողներին այցելություններ էր կազմակերպում դեպի Արցախ: Գասպար Կարապետյանի խոսքով՝ պատերազմից հետո դժվարացել է կացությունը, եւ պետք է հասկանալ նոր իրավիճակում արդյունավետ գործելու ուղիները:

Մարտի 10-ին Եվրոպական խորհրդարանը (ԵԽ) հրատապ ընթացակարգով եւ ճնշող մեծամասնությամբ Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության պահպանության նկատմամբ տարածքային պահանջները, ինչը վտանգում է խաղաղությունը եւ խաթարում անվտանգությունը Հարավային Կովկասում: Եվրախորհրդարանը քննադատում է Արցախի ծավալապաշտական, ռազմատեսչ քաղաքականությունը եւ կոչ է անում Արցախին հրաժարվել առավելապաշտական նկր-

տումներից: Բանաձեւում նաեւ շեշտվում է, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը դեռեւս կարգավորված չէ, եւ որ այն պետք է հստակեցվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

ԵԽ լիագումար նիստի ընթացքում քննադատվեց Արցախում հայկական պատմամշակութային ժառանգության դեմ Արցախի ազդեցիկ քաղաքականությունը: Արցախի կողմից Արցախում մշակութային ժառանգության ոչնչացումը դիտարկվում է որպես այդ երկրում պետական մակարդակով տարվող՝ համակարգված հայտայաց քաղաքականության բաղկացուցիչ մաս: Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձեւում առաջին անգամ օգտագործվում է «արմենֆոբիա» եզրույթը: Շեշտվում է, որ մշակութային ժառանգության ոչնչացումից բացի Արցախում հայտայացության պե-

տումներից: Բանաձեւում նաեւ շեշտվում է, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը դեռեւս կարգավորված չէ, եւ որ այն պետք է հստակեցվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

Եվրախորհրդարան Արցախից պահանջում է՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին անհապաղ թույլ տալ իրականացնելու իր առաքելությունը տեղում՝ խորհրդակցելով նաեւ հայ մասնագետների հետ, եւ առաջարկում է օգտագործել Եվրամիության արբանյակային հնարավորությունները փաստերն արձանագրելու համար:

«Փաստ է, որ Եվրոպական խորհրդարանը խստորեն դատապարտում է Արցախում պետական մակարդակով տարվող հայտայաց քաղաքականությունը: Սա կարելու լծակ է Արցախի վրա ճնշում գործադրելու եւ այդ երկրի բարբարոսական քաղաքականության վերաբերյալ բարձրաձայնելու համար», - նշում է Գասպար Կարապետյանը:



տական քաղաքականության դրսեւորումներից են նաեւ պատմության սրբազրույց, հայերի նկատմամբ բռնության փառաբանումը, Հայաստանի Հանրապետության նկատմամբ տարածքային պահանջները, ինչը վտանգում է խաղաղությունը եւ խաթարում անվտանգությունը Հարավային Կովկասում: Եվրախորհրդարանը քննադատում է Արցախի ծավալապաշտական, ռազմատեսչ քաղաքականությունը եւ կոչ է անում Արցախին հրաժարվել առավելապաշտական նկր-

տումներից: Բանաձեւում նաեւ շեշտվում է, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը դեռեւս կարգավորված չէ, եւ որ այն պետք է հստակեցվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

տն օժանդակել Արցախին եւ Արցախի կարգի հրավիրել», - ասում է Գ. Կարապետյանը:

«Մենք պետք է ցույց տանք, որ քանի Արցախի հարցը չի լուծվել, իսկ լուծվել ասելով՝ ի նկատի ունեմ Արցախի ժողովրդի ազատ ինքնորոշման հարգումը, այս կացությունը շարունակվելու է: Սրանք մեր տեսակետը հիմնավորելու փաստեր են: Այսօր Արցախը մեծամտություն ունի՝ մտածելու, թե Արցախի հարցը վերջացավ: Դա այդպես չէ», - նշում է գրասենյակի նախագահը: Նա անդրադարձել է նաեւ հայոց պետականության պահպանման գործում Արցախի ունեցած դերին: «Արցախը մեր անբաժանելի մասն է, եւ եթե այն հայաթափվի, Սյունիքը ու այնուհետեւ Հայաստանն ամբողջությամբ եթե չհայաթափվի էլ, Արցախի եւ Թուրքիայի ձեռքին կույլ է գնալու: Դրա համար շատ կարելու է երկու հանրապետությունների՝ ՀՀ եւ ԱՀ ղեկավարների, գերատեսչությունների սերտ գործակցությունը, միահամուռ աշխատանքը»:

Հայ դատի ասպարեզում 50 տարուց ավելի գործունեություն ծավալած գործչին մտահոգում է ՀՀ արտաքին քաղաքականության ասպարեզում տիրող իրավիճակը:

«Կարելու է, որ մենք տարբեր երկրներում ՀՀ-ի ունեցած դիվանագիտական ներկայացուցչությունների հետ լավ հարաբերություններ ունենանք՝ ի շահ մեր ժողովրդի: Բայց, դժբախտաբար, վերջին շրջանում ՀՀ իշխանությունների կողմից նշանակվում են դեսպաններ, որոնք ոչ դիվանագիտական փորձառություն ունեն, ոչ համապատասխան հմտություններ: Սա վտանգավոր քաղաքականություն է: Այս դժվարին օրերին արտաքին գործերի նախարարությունում պետք է տեղ ունենան մեր փորձառու դիվանագետները: Այս առիթով կոչ եմ անում ՀՀ իշխանություններին վերանայել այս քաղաքականությունը: Ոճիր է այս պահին մեր դիվանագետներին չներգրավելը: Չեմ կարող ասել՝ ԶԳ-ի կողմից նշանակվող մարդիկ լավն են կամ վատն են, իմ հարցը սկզբունքային է: Ես իմ կյանքի մեծ մասը տվել եմ հայ ժողովրդի, հայ դատի շահերի պաշտպանությանը, եւ անձնական շահ կամ ակնկալիք չունեմ: Իմ մտահոգությունն ազգի ապագան է», - ասում է փորձառու ազգային գործիչը:

S. ԱՐԱՋԱՆՅԱՆ

ՀՀ կառավարությունը պարտավոր է Արցախի բնակչության անվտանգության երաշխավորի՝ իր ստանձնած հանձնառությունն իրացնել. ՀՀ ԴԿՄ

Արցախի Հանրապետությունում խաղաղ բնակչության նկատմամբ ադրբեջանական շարունակական սադրանքներն ստեղծել են անվտանգության եւ հումանիտար իրավիճակի նոր սպառնալիքներ:

Ադրբեջանի օկուպացիոն զորքերը դիտավորությամբ վնասել են Հայաստանից Արցախի Հանրապետություն մտնող գազատարը, խոչընդոտում են գազատարի վերանորոգման աշխատանքներին, տեսական ժամանակ է, ինչ արցախցիներին գրկել են գազից: Գազատարի չգործելու պատճառով խնդիրներ են առաջացել նաեւ Էներգամատակարարման համակարգում: Բնականոն քաղաքացիական կյանքն Արցախում կաթվածահար վիճակի մեջ է, եւ մարդիկ կանգնած են հումանիտար աղետի շեմին: Միաժամանակ, վերջին օրերի ընթացքում հաճախակի եւ պարբերական բնույթ են ստացել միջին եւ խոշոր տրամաչափի զինատեսակներով Արցախի խաղաղ բնակավայրերի հրետակոծումներն ու սադրիչ գործողությունները:

Ակնհայտ է, որ, օգտվելով առիթից, Ադրբեջանը հետեւողականորեն փորձում է ամեն կերպ հեղինակագրել ռուսական խաղաղապահ առաքելությունը եւ հաս-

նել Արցախի հայաթափմանը: Կտրուկ մերժելի համարելով Հայաստանի իշխանությունների ցուցաբերած անգործությունն ադրբեջանական հանցավոր այս վարքագծի նկատմամբ, անընդունելի համարելով միջազգային հանրության կրավորական կեցվածքը՝ փաստենք, որ համապատասխան արձագանքի բացակայությունը քաջալերում է Ադրբեջանի կողմից Արցախի հայաթափմանն ուղղված քաղաքականությունը եւ խրախուսում Արցախի Հանրապետության վրա ռազմաքաղաքական ճնշման սաստկացումը:

ՀՀ ԴԿՄ Հայաստանի Գերագույն Մարմինը, զորակցություն հայտնելով Արցախի Հանրապետությանն ու Արցախի ժողովրդին, ուղերձ է հղում՝

1. միջազգային մարդասիրական կազմակերպություններին եւ օտարերկրյա պետություններին՝ դատապարտել Ադրբեջանի կողմից իրականացվող էթնիկ գտման քաղաքականությունը եւ ճնշում բանեցնել Ադրբեջանի կառավարության վրա՝ վերջ տալու Արցախի խաղաղ բնակչության դեմ կիրառվող ահաբեկչական գործելակերպին,

2. Սփյուռքի հայկական կազմակերպություններին, մեր հայրենակիցներին, Արցախի բարեկամների «Պրո Արցախ» միջազգային ցանցի մասնակիցներին, բարի կամքի տեր անձանց՝ դիմել իրենց կառավարություններին՝ պահանջելով Ադրբեջանից դադարեցնել խաղաղ բնակչության դեմ թշնամական գործողությունները:

Այս ծանրագույն պայմաններում.

1. Հայաստանի կառավարությունը պարտավոր է գործուն քայլեր ձեռնարկել Արցախի բնակչության անվտանգության երաշխավորի՝ իր ստանձնած հանձնառությունն իրացնելու համար,

2. Ազգային ժողովը պետք է անհապաղ հրավիրի Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության Ազգային ժողովների միջխորհրդարանական հանձնաժողովի նիստ՝ Արցախում ստեղծված մարդասիրական ճգնաժամի եւ ռազմաքաղաքական իրավիճակի հարթահարման ուղղությամբ գործնական քայլեր քննարկելու եւ ձեռնարկելու համար:

ՀՀ ԴԿՄ Հայաստանի Գերագույն Մարմին
15.03.2022 թ.

Արցախցու կամքը կոփված է

Անցնող շաբաթվա ընթացքում Արցախը շարունակում էր իր ահաբեկչական գործողությունները Արցախի բնակչության դեմ: Մասնավորապես՝ իրավիճակը լարված է եղել Ասկերանի շրջանի Խրամորթ, Խնապատ, Նախիջեանի, Մարտունու շրջանի Խնուշիակ, Կարմիր շուկա, Նորշեն սահմանամերձ համայնքներում: Թշնամին խաղաղ բնակչության շրջանում խուճապ տարածելու նպատակով նշված գյուղերի եւ դրան հարակից հայկական դիրքերի վրա կիրառում էր տարբեր տրամաչափի զինատեսակներ, բարձրախոսներով համայնքի բնակիչներին հորդորում լքել տները, այլապես սպառնալով զենքի ուժով նրանց տեղահանել, ցուցադրաբար համայնքներին էին մոտեցնում ծանր զինատեսակներ, խանգարում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:



«Ապառաժ»-ը, արձագանքելով համացանցում շրջանավոր լուրերին, թե Խրամորթում գյուղացիները տարահանվել են եւ թշնամին ծանր զինատեսակներ է կուտակում գյուղի հետ սահմանին, այցելել է Խրամորթ համայնք եւ տեղում ծանոթացել ստեղծված իրավիճակին:

Այցելելով գյուղ՝ արձանագրեցինք, որ գյուղացիների տարահանում չի կազմակերպվել, այլ սեփական նախաձեռնությամբ գյուղից ժամանակավորապես դուրս են եկել երեխաներն ու երիտասարդ աղջիկները, իսկ կանայք եւ տղամարդիկ շարունակում են մնալ գյուղում, զբաղվում են առօրյա հոգսերով, միաժամանակ՝ հերթապահում գյուղում:

Գյուղի տարածքում կան ռուս խաղաղապահներ, ովքեր կատարում են իրենց առաքելությունը:

«Ապառաժ»-ի հետ զրույցում գյուղացիները նշում են, որ արկերը հիմնականում պայթում են գյուղի ծայրամասերում, որի արդյունքում վիրավորում է ստացել նաեւ գյուղի բնակիչներից մեկը:

Անդրադառնալով գյուղի մոտ թշնամու ծանր տեխնիկայի կուտակման մասին լուրերին՝ գյուղացիներից մեկը նշեց, որ Ավնայի ճանապարհով ցուցադրաբար 2 տանկ



են բերել եւ տարել, որպեսզի բնակիչներին խուճապի մատնեն, իսկ հնչեցվող ձայնագրություններին արդեն լուրջ չեն վերաբերվում:

Մարտունու շրջանի Նորշեն համայնքի ղեկավար Գեորգ Գարությունյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց,

որ գյուղում իրավիճակը եւս լարված է եղել մարտի 7-14-ն ընկած ժամանակահատվածում: Այդ ընթացքում թշնամու կողմից արձակվել են տարբեր տրամաչափի զինատեսակներից կրակոցներ, որոնք բարեբախտաբար գյուղին որեւէ վնաս չեն հասցրել: «Մարդիկ շարունակում են ապրել իրենց տներում, զբաղվել առօրյա հոգսերով, սակայն գյուղատնտեսական աշխատանքներն այն հունով չեն ընթանում, որով որ պետք է ընթանային, քանի որ թշնամին խոչընդոտում է այդ աշխատանքների ընթացքը: Ժամանակ առ ժամանակ ռուս խաղաղապահների ներկայությամբ են կատարվում այդ աշխատանքները»,- ասել է համայնքի ղեկավարը:

Նրա խոսքով՝ գյուղում կարիք կա, որպեսզի տեղակայվեն ռուս խաղաղապահներ, քանի որ գյուղն անմիջապես գտնվում է սահմանին: Բացի այդ, նա կարեւոր է համարում նաեւ գյուղացիներին զենքի տրամադրումը, որպեսզի հարկ եղած դեպքում կարողանան պաշտպանել գյուղը:

Գ. Գարությունյանը նաեւ նշեց, որ թշնամու նպատակը մեզ իրենց ենթարկեցնելն է եւ խուճապ տարածելը բնակչության շրջանում:

Ասկերանի շրջանի Նախիջեանի համայնքի ղեկավար Սեւակ Պողոսյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ կրակոցներն ինտենսիվ բնույթ չեն կրել, սակայն դեպքեր եղել են, երբ ակասանետից արձակված արկերն ընկել են գյուղի վերջին տներից մոտ 300 մ հեռավորության վրա, գյուղի ֆերմաների տարածքում, իսկ հունվարի 10-ին կրակել են նաեւ գյուղի տարածքում գտնվող տրակտորի վրա: Բացի այդ, իրենց դիրքերից ինքնաձիգերից անկանոն կրակոցներ են եղել, որոնք գյուղի տարածք չեն հասել,

ահաբեկելու միտում են ունեցել:

«Գյուղում խուճապային տրամադրություններ չկան, սակայն իրենց այս գործողություններով խոչընդոտում են գյուղացիների՝ գյուղատնտեսական աշխատանքները կատարելուն, եւ այս պահին այդ աշխատանքներն ամբողջությամբ դադարեցված են»,- նշել է համայնքի ղեկավարը:

Նրա խոսքով՝ բնակիչներին անվտանգությունն ապահովելու համար նրանք առաջիններից էին, որ բարձրացրել են գյուղացիներին զենք տրամադրելու հարցը:

Մարտունու շրջանի Կարմիր շուկա համայնքի ղեկավար Նարեկ Աթայանն էլ «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց, որ անցնող շաբաթում գյուղում եւս լսվել են կրակոցներ, սակայն, բարեբախտաբար, որեւէ վնաս համայնքը չի կրել:

Նրա խոսքով՝ բնակիչներն իրենց տներում են, խուճապային տրամադրություններ չկան այս պահին:

«Յրադարձի խախտման դեպքերը եղել են հինգշաբթի, ուրբաթ օրերին Թաղավարդի ուղղությամբ, բայց լսվել է նաեւ Կարմիր շուկայում: Հիմնականում կրակել են հրաձգային զինատեսակներից: Յետագայում պարզվել է, որ ռուսական խաղաղապահ զորակազմի տեղակայման վայրի ուղղությամբ են եղել կրակոցները, շենքի տանիքին է կպել: Վերջին օրերին ձայնագրություն են տարածում, որ ժողովրդի մեջ վախ տարածեն»,- ասել է Ն. Աթայանը:

Նա նաեւ նշեց, որ ամենամտահոգող հարցը անվտանգության ապահովումն է, հատկապես բնակելի տների վրա թիրախավորումները բացառելը:

Ինչպես տեղեկացնում է Մարտունու շրջանի Խնուշիակ համայնքի ղեկավար Կամո Մուրսալյանը, համայնքում իրավիճակը հանգիստ է եւ բնակչությունը զբաղված է իր առօրյա հոգսերով: Պատերազմից հետո գյուղի ուղղությամբ սարքանքներ չեն եղել, եւ մարտի 9-ի արկակոծությունն առաջին անգամ էր:

«Մարտի 9-ին գյուղի հարակից խաղողագիներում եւ ցորենի դաշտերում մարդաշատ էր, եւ հենց այդ ժամանակ էլ թշնամին ականանետից 4 ակն է արձակել այդ

ուղղություններով: Դրանից հետո հանգիստ է եղել: Մարդկանց մոտ մտահոգություններ, իհարկե, կան, որը բնական է, սակայն խուճապի չեն մատնվում»,- նշել է համայնքի ղեկավարը:

Ասկերանի շրջանի Խնապատ գյուղի համայնքապետ Սամվել Շահրամանյանն էլ մեզ հետ զրույցում նշեց, որ անցնող օրերին խուճապային տրամադրություններ գյուղում չեն նկատվել:

«Կրակոցներ եղել են գյուղի ուղղությամբ, սակայն, բարեբախտաբար, գյուղի տարածք չեն հասել եւ որեւէ վնաս չեն պատճառել: Բնակիչների մոտ, իհարկե, մտահոգություն կա, սակայն բնականոն կյանքով են ապրում. դպրոցը արձակուրդի մեջ է, սակայն մանկապարտեզը շարունակում է աշխատել»,- ասել է Ս. Շահրամանյանը:

Նրա խոսքով՝ թշնամու երազանքը մեզ մեր հողից կտրելն է, ինչքան հնարավոր է շատ վնաս պատճառելը:

Համայնքի ղեկավարը հրատապ է համարում գյուղում ապաստարանների եւ գյուղի համար անվտանգություն ապահովող այլ շինությունների կառուցումը, որի մասին արդեն իսկ տեղեկացրել են պատկան մարմիններին:

Մարտունու շրջանի Թաղավարդ համայնքի ղեկավար Օլեգ Գարությունյանն էլ նշեց, որ կրակոցներ շատ չեն եղել, միայն մի քանի անգամ բարձրախոսներով գյուղը լքելու հայտնի կոչերն են հնչեցվել, որին սակայն գյուղացիները լուրջ չեն վերաբերվում, քանի որ գիտակցում են, որ դա արվում է խուճապ տարածելու համար:

Մարտի 14-ին թշնամու դիրքերից մի քանի մետր հեռավորության վրա գտնվող Թաղավարդ գյուղի ներքեի հատվածում ռուս խաղաղապահները բարձրախոսներով կոչեր են ուղղել՝ հայերեն, ռուսերեն եւ արցախերեն: Նրանք մեջքերել են 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարություն դրույթները եւ կոչ արել պահպանել հրադադարի ռեժիմը, սադրանքների չտրվել:

Համայնքի ղեկավարը տեղեկացրեց նաեւ, որ ռուս խաղաղապահների կողմից ուժեղացվել է հսկողությունը:




«Ապառաժ»-ի հետ զրույցում Թաղավարդի բնակիչ Ռուդիկ Բադալյանը նշել է, որ արցախական կողմի սադրանքները վերսկսվել են մի քանի օր առաջ, երբ նրանք միացնելով արդեն հայտնի դարձած ձայնագրությունը՝ կոչ են արել լքել տարածքը, կրակոցներ արձակել: «Երկրորդ գիշերն է, որ համեմատաբար խաղաղ է: Ուրախալի է, որ այսօր էլ ռուս խաղաղապահներն են ձայնագրություն միացրել: Բնակիչներից ոչ մեկն այս ընթացքում չի լքել գյուղը, սովորական իր առօրյայով ապրում է»,- նշել է նա:

Թաղավարդ Կալերի բնակիչ Արթուր Թովմասյանն էլ տեղեկացնում է, որ այստեղ ապրում է իր ընտանիքի՝ զավակների եւ թոռների հետ: «Լրիվությամբ անվտանգ զգալու համար պետք է թուրքերին քշել այստեղից: Այս գիշեր էլ վերելի դիրքից մի քանի անգամ կրակեցին, բայց ոչ ինտենսիվ: Բոլորը դուխով են»,- փաստում է Արթուր Թովմասյանը:

Ընդհանուր առմամբ, դիտարկելով բոլոր ուղղություններով թշնամու գործողությունների բնույթը, գալիս ենք այն համոզման, որ թշնամու նպատակը մեկն է՝ վախեցնել ու խուճապի մատնել բնակիչներին՝ այդ կերպ փորձելով հայաթափել Արցախը: Սակայն արցախցու կամքը կոփված է, իսկ նա՝ կառչած իր հողից, եւ թշնամու սանձարձակ պահվածքը չի կարող վախեցնել նրան:


Արցախի «Արդարություն» կուսակցություն. 2021թ. ֆինանսական միջոցների աղբյուրների եւ ծախսերի, ինչպես նաեւ գույքի մասին հաշվետվություն եւ անկախ աուդիտորական եզրակացություն



Արցախի «Արդարություն» կուսակցություն

2021թ. ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն և Անկախ Աուդիտորական եզրակացություն

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ Մարտ 2022թ.



Աուդիտոր Պրո ՓԲԸ ԱՇ. ք. Արցախ/համայնք Կ. Մամիկոնյան 29/6

+ 37447 959575 www.auditpro.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒՄՆԵՐԸ

Արցախի «Արդարություն» կուսակցության ղեկավարությանը

Կարծիք

«Կուսակցությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքին համապատասխան մենք աուդիտի ենք ենթարկել Արցախի «Արդարություն» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը՝ 2021թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար (այսուհետ՝ Հաշվետվություն):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը Հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամիջ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՄՍԿ կանոնագիր) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԿ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հաշվետվության համար ղեկավարության և կառավարման օղակներում գործող անձանց պարտախանարվությունը

Կուսակցության ղեկավարությունը պատասխանատու է Հաշվետվության կզման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարոյախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հաշվետվության պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պարտախանարվությունը Հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Հաշվետվությունը, ամբողջությամբ վերցրած, զերծ է խարոյախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, քայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալ կամ խարոյախության արդյունքում, և համարվում են էական, երբ խեղաթյուրումն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարգին Հաշվետվության օգտագործողներին՝ այդ Հաշվետվության հիման վրա կայացվող որոշումների վրա:

- հատկորոշում և գնահատում ենք խարոյախության կամ սխալի հետևանքով Հաշվետվությունում էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարոյախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարոյախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղեցիկարարություն, միտումնալից քայքայումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
• ձեռք ենք բերում աուդիտի վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կուսակցության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
• գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված բաղաձայնությունների լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից քայքայությունների խեղաթյուրումները:
• եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կուսակցության անընդհատ գործունեության կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզակից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել Հաշվետվությունում համապատասխան քայքայությունների, կամ, եթե այդպիսի քայքայությունները բավարար չեն, մնալովին մեր

կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել դարձնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
• գնահատում ենք ընդհանուր առմամբ Հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ քայքայությունները, և արդյոք Հաշվետվությունը ներկայացնում է դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջարկների պատկերով շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

07 մարտի 2022թ. «ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Signatures and stamps of the auditor and the client. Includes the name of the auditor, 'Անուշ Մարտիրոսյան Աուդիտոր', and the name of the client, 'Արևիկ հաշվապահ Տնօրեն'.

Արցախի «Արդարություն» կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն՝ 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

ԿՈՒՍԱԿՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՇՎՈՒՄ ՄՈՒՏՔ ԱՐԿԱՅ ԵՎ ԾԱՆՈՒՎԱԾ ԳՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Table with 5 columns: Աղբյուրներ, Քանակը, Արժեքը (հազ. դրամ), Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/դրամարկղ), Այլ տվյալներ. It lists various sources of funds and their amounts.

Table with 5 columns: Աղբյուրներ, Քանակը, Արժեքը (հազ. դրամ), Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/դրամարկղ), Այլ տվյալներ. It lists various expenses and their amounts.

Table with 2 columns: 19. Մնացորդը տարվա վերջում, 228,7

Stamp and signature of the auditor, 'Անուշ Մարտիրոսյան'.

Table with 5 columns: Աղբյուրներ, Քանակը, Արժեքը (հազ. դրամ), Գույքի անվանումը, հասցեն, համաձայն կերպարվող, չափերը, Այլ տվյալներ. It lists various assets and their details.

Stamp and signature of the auditor, 'Անուշ Մարտիրոսյան'.

ԿՈՒՍԱԿՑՈՒՄՆԵՐԸ ԾԱՌՎԱԿԱՆ ԳՈՒՅԵՐԸ

Table with 5 columns: Աղբյուրներ, Քանակը, Արժեքը (հազ. դրամ), Գույքի անվանումը, մակիջը և սերիան, թողարկման տարեթիվը, Այլ տվյալներ. It lists various services and their costs.

Stamp and signature of the auditor, 'Անուշ Մարտիրոսյան'.

ՕՏԱՐՎԱԾ ԿԱՄ ԴՈՒՐՄ ԳՐՎԱԾ ԳՈՒՅԵՐԸ

Table with 5 columns: Գույքի անվանումը, Քանակը, Արժեքը, Օտարման ձևը, Այլ տվյալներ. It lists various items and their values.

Stamp and signature of the auditor, 'Անուշ Մարտիրոսյան'.

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն. 2021թ. ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն և անկախ աուդիտորական եզրակացություն



«ԱՅ ՅԵՂԱՓՈՒՃԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցություն

2021թ. ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն և Անկախ Աուդիտորական եզրակացություն

ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏ Մարտ 2022թ.



ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏ Մարտ 2022թ.

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՅ ՅԵՂԱՓՈՒՃԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցության ղեկավարությանը

Հարձիգ

«Կուսակցությունների մասին» Արցախի Հանրապետության օրենքի համապատասխան մենք աուդիտի ենք ներառել «ԱՅ ՅԵՂԱՓՈՒՃԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվությունը՝ 2021թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար (այսուհետ՝ Հաշվետվություն): Մեր կարծիքով, կից 2021թ. Հաշվետվությունը, ներառելով Կուսակցության հաշվում մուտք արված և ծախսված դրամական միջոցների, Կուսակցության անշարժ և շարժական գույքի, ինչպես նաև օտարված կամ դուրս գրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը, տալիս է դրանց վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության 2019թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1082-Ն որոշման:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը Հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնարամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրատարակված Գրոհման հաշվապահի էթիկայի կանոնադրի (ՀԷՄՍ կանոնադր) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում - Անշարժ գույքի արժեքներ

Ձեր ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքին, որ Կուսակցությունը հաշվետվությունում անշարժ գույքի (շենքեր, շինություններ) արժեքները արտացոլել է կարաստրային արժեքներով՝ ընդունելով որ այդ արժեքները մոտ են դրանք իրական արժեքներին և համապատասխան են հիմնական միջոցների վերագնահատման մոդելով հաշվարկված պահանջներին ու ընդհանրապես:

Մեր կարծիքը չի ձևափոխվում այս դեպքի ամենայնուայնով:

Հաշվետվության համար ղեկավարության և կառավարման օղակներում գրեցող անձանց պատասխանատվությունը

Կուսակցության ղեկավարությունը պատասխանատու է Հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գրեցող անձինք պատասխանատու են Հաշվետվության պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Հաշվետվությունը, ամբողջությամբ վերցրած, զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալ կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամուռն են կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն Հաշվետվության օգտագործողների՝ այդ Հաշվետվության հիման վրա կայացվող որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կանխձանձություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Հաշվետվությունում էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արժագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, գեղեցիկություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտի վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կուսակցության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվարկման կիրառված ընթացակարգերի տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվարկման գնահատումների և կից բացահայտումների խելամուռնությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվարկման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կուսակցության անընդհատ գործերի կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել Հաշվետվությունում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
- գնահատում ենք ընդհանուր առմամբ Հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք Հաշվետվությունը ներկայացնում է դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադրություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջարկների պահանջարկի շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունների մասին:

17 մարտի 2022թ. «ԱՈՒԴԻՏ ԳՐՈՒ» ՓԲԸ



«ԱՅ ՅԵՂԱՓՈՒՃԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին հաշվետվություն՝ 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱԿՈՒՄ ՄՈՒՏՔ ԱՐՎԱԾ ԵՎ ԾԱՆՈՒՄ ԿՐԱՄԱԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Հատկացման ձևը (կանխիկ/փոխանցում, բանկային հաշիվ/գրանցված)	Այլ տվյալներ
1. Նախորդ տարվանից առաջացած մնացորդ հունվարի 1-ի դրությամբ		134,1		
2. Մուտքի վճարներ				
3. Մնացումն փոխանցող վճարներ		13 708,0	կանխիկ	
4. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (ընչև նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)				
5. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (ընչև նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)				
6. Օրենքով նախատեսված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում		4 135,0	փոխանցում	
7. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (ընչև գործարքը կամ արդյուրը)		2 160,0		
2) Կարճակատության դիմաց		1 800,0	փոխանցում	Գրանցված (ԱՀ. ք. Մարտի, Ազգայնաբարձրիների փ.)
		360,0	փոխանցում	Քանակային (ԱՀ. ք. Արևմտահայկեր, Հեղինակ 5/42)
8. Ընդամենը մուտք արված դրամական միջոցներ		20 003,0		
9. Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների մատուցման վճարներ)		11 918,4		
1) Ֆիզիկական անձանց տրված վճարներ (աշխատավարձ, ծառայությունների վճարներ)		11 043,4	փոխանցում	
		875,0	կանխիկ	
10. Սոցիալական վճարներ		278,5	փոխանցում	

11. Գույքի վարձակալության վճար (ընչև գույքի անվանումը, վարձակալության ժամկետները)				
12. Կոմունալ վճարումներ (ընչև կոմունալ սպասարկման անվանումը)		2 583,4		
1) հեռախոսակապի և ինդերենտի ծառ.		880,6		
2) էլեկտրիկա		872,0		
3) գազ		631,1		
4) ջուր		34,2		
5) փոստային ծառայություն		136,0		
6) արձախանում		29,5		
13. Հարկեր և տուրքեր (ընչև հարկատեսակը)		2 612,6		
1) եկամտային հարկ		2 195,6		
2) որոշմանչափային վճար		345,0		
3) գույքահարկ		72,0		
14. Գույքի ձեռքբերման համար կատարված ծախսեր (ընչև գույքի անվանումը և քանակը)		756,0		
1) ք. Մարտի/հրդուրում ձեռքբերված գույքի դիմաց վարձավճարված վճարում		756,0	փոխանցում	
15. Տրամաբարության ծախսեր				
16. Գործուղման ծախսեր				
17. Այլ ծախսեր		1 970,5		
1) փոխադրական ծառայություններ		1 601,2		
2) գրասենյակային ծախսեր		192,8		
3) բանկային ծախս		11,5		
4) աուդիտորական ծառայություն		150,0		
5) այլ ծախսեր		15,0		
18. Ընդամենը ծախսված դրամական միջոցներ		20 119,4		
19. Մնացորդ տարվա վերջում		17,7		

ՀՅԳ՝ գերագույն մարմնի ներկայացուցիչ



ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՇԱՐՋ ԳՈՒՅԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, հասցեն, համաստիակը, արժեքը, չափերը	Այլ տվյալներ
1. Առկա անշարժ գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	6	67 552,0	շենքեր, շինություններ - ընդհանուր մակերեսը՝ 1,051.88քմ	
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (ընչև նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)				
1)				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (ընչև նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)				
1)				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (ընչև գործարքը կամ արդյուրը)				
1)				
5. Առկա անշարժ գույքը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	6	67 552,0	շենքեր, շինություններ - ընդհանուր մակերեսը՝ 1,051.88քմ	

ՀՅԳ՝ գերագույն մարմնի ներկայացուցիչ: Գրախոս Ռուբենի Իշխանյան: ՕՏԱՐՎԱԾ ԿԱՐ ԳՐՈՒՄ ԳՐՎԱԾ ԳՈՒՅԵՐԸ

Գույքի անվանումը	Քանակը	Արժեքը	Օտարման ձևը	Այլ տվյալներ
1)				
2)				
3)				

ՀՅԳ՝ գերագույն մարմնի ներկայացուցիչ: Գրախոս Ռուբենի Իշխանյան:



ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱԿԱՆ ԳՈՒՅԵՐԸ

Աղբյուրները	Քանակը	Արժեքը (հազ. դրամ)	Գույքի անվանումը, մակերեսը և սերիան, թողարկման տարեթիվը	Այլ տվյալներ
1. Առկա շարժական գույքը հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	10	650,0	բազմաբնույթ	
	1	550,0	սերիան՝ ժողովների	
	3	420,0	գրասենյակ	
	11	1 650,0	համակարգիչներ	
2. Ֆիզիկական անձանց նվիրատվություններ (ընչև նվիրատուի անունը, հայրանունը, ազգանունը, բնակության վայրը)				
1)				
2)				
3)				
3. Իրավաբանական անձանց նվիրատվություններ (ընչև նվիրատուի անվանումը, գտնվելու վայրը)				
1)				
2)				
3)				
4. Քաղաքացիական իրավական գործարքներից և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերից (ընչև գործարքը կամ արդյուրը)				
1)				
2)				
3)				
5. Ընդամենը	25	3 270,0		

ՀՅԳ՝ գերագույն մարմնի ներկայացուցիչ: Գրախոս Ռուբենի Իշխանյան:



«Ոսկե արծիվ» շքանշանակիր Արայիկ Սերգեյի Գրիգորյան

Արցախյան վերջին պատերազմում հանուն հայրենիքի անմահացածների շարքում կան այնպիսի անհատներ, որոնք անուրանալի ավանդ ունեն հայրենի երկրի տարբեր ոլորտների կայացման, բարգավաճման գործում: Իր ծննդավայրը, հայրենիքը, ինչպես նաև տարիներով ստեղծածը պաշտպանելու գիտակցությունն է այդպիսի մարդկանց մղել առաջնագիծ, ստիպել դառնալ զինվոր, պարտավորեցրել իրենց վրա վերցնել նոր պատասխանատվություն: Այդպիսի անհատներից է Արցախի հերոս, գեներալ-մայոր, Արցախի Յանթապետության Ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ Արայիկ Սերգեյի Գրիգորյանը:

Գործընկերներն ու հարազատները նրան բնորոշում են որպես արհեստավարժ, խելացի մասնագետ, բարի, անկեղծ, իր գործին ու ընտանիքին նվիրված, մեծահոգի անձնավորություն:

Ծնվել է 1970 թվականի հունիսի 24-ին Ստեփանակերտ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ստեփանակերտի եղիշտ Զարեհի անվան համար 7 միջնակարգ դպրոցում, որի դասատեղյակներից մեկն այժմ կրում է նրա անունը: Արայիկ Գրիգորյանը եւ կրթության մեջ էր աչքի ընկնում, եւ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

1988-1992 թվականներին սովորել է Երեւանի Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի Ֆիզիկական կուլտուրա բաժնում: 2015 թվականին ավարտել է Արցախի պետական համալսարանի մագիստրատուրան՝ Զբոսայգիների մասնագիտությամբ:

1994-1995 թվականներն ընկած ժամանակահատվածը ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակում:

1995 թվականի հոկտեմբերի 19-ից ծառայության էր անցել ԱՀ Ազգային անվտանգության ծառայությունում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ սկսելով ծառայության ստորին օղակներից, հետագայում զբաղեցնելով բաժնի պետի եւ վարչության պետի պաշտոններ: 2019 թվականի նոյեմբերի 15-ից զբաղեցնում էր ԱՀ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալի պաշտոնը:

ԱՀ Նախագահ Արայիկ Յարուբյանյանի ԼՂՀ-152-Ա առ 29.08.2020թ. հրամանագրով շնորհվել է գեներալ-մայորի զինվորական կոչում:

Իր երկարամյա ծառայության ընթացքում Արայիկ Գրիգորյանը պարգևատրվել է գերատեսչական բազում մեդալներով ու պատվոգրերով, հետմահու՝ ԱՀ Մարտական Խաչ 1-ին աստիճանի եւ «Ոսկե արծիվ» շքանշաններով:

Չնայած աշխատանքային գերձանրաբեռնվածությանը, նա միշտ կարողանում էր ընտանիքի համար ժամանակ գտնել: Ունի երկու դուստր՝ Մարիամ եւ Աննա: Հոր մասին պատմելիս, չնայած անհուն ցավին, Մարիամի աչքերը յուրահատուկ փայլ են ստանում. «Շատ լավ հայր էր ինձ եւ քույրիկիս համար: Մեր հարաբերությունները դասական հայր-զավակ հարաբերությունները չէին, շատ մտերիմ էին այն առումով, որ այնպիսի մի թեմա չկար, որ չխոսեիրք ու չքննարկեիր: Ինձ համար նա տղամարդու իդեալ էր: Աշխարհի ամենաերջանիկ մարդն էմ, որ եւ արտաքսպատե, եւ բնավորությամբ նրա նման եմ: Առաջին հերթին աշխատասիրությունը, պատասխանատվության բարձր աստիճանը ու կարգապահությունը ժամանակ էմ հորիցս»:

Աշխատանքի բերումով միշտ ծանրաբեռնված էր, բայց մանուկ ժամանակից նրան եւ քոռը հատուկ ուշադրություն էր դարձնում: «Հանգստյան օրերին պարտադիր մեզ տանում էր զբոսանքի: Նրա աշխատավայրի դիմացի այգին էինք հիմնականում գնում տաք եղանակային պայմանների դեպքում: Երբեմն հագեցած աշխատանքային օրվանից հետո օգնում էր դասապատրաստման պրոցեսին: Հիշում եմ, թե ինչպես էր իմ ուներների շարադրությունները գրում: Այնպես որ, որպես հայր՝ միշտ այդ ջերմությունն ստացել ենք»,- նշում է Մարիամ Գրիգորյանը:

Հոր ու դստեր երեկոյան զբոսանքները Ստեփանակերտի կուրորտային իրադարձություններից էին: «Ամենացավալին այն է, որ ամեն օր սպասում ենք աշխատանքից գալուն: Բանալու ձայն լսելիս, մտածում ենք, թե նա է ավտոտնակի դուռը բացում: Հոգեբանորեն այնքան կապված ենք, որ ներկայությունը միշտ զգում ենք»,- պատմում է Մարիամը: Արգելված թեմա չունեին, ամեն ինչից խոսում էին. «Երբ խոսում էինք կոռուպցիոն երեւույթների մասին, միշտ ասում էր՝ Մարիամ, ամենակարեւորն այն է, որ աշխատանքից հետո մաքուր խղճով գլուխդ հանգիստ դնում ես բարձին»:

Մի յուրահատուկ հատկանիշ էլ ուներ. շատ շուտ ներում էր, հնարավոր է ջղայնանար, բորբոքվեր, բայց երկու ընտանիքներում էր ու մոռանում դրա մասին: Գործից դուրս այլ հետաքրքրություններ էլ ուներ: «Առաջին հորբին ֆուտբոլն էր, ամեն շաբաթ ֆուտբոլ էր խաղում: 2018թ. Արցախի ֆուտբոլի վետերանների հավաքականի հետ մեկնել է Աբխազիա, եւ նրանք առաջին մրցանակա-

լին տեղն են գրավել: Նաե այդ ուներ էրամորթում: Վերջին լարված օրերին մենք մտահոգվում ենք նաե այգու համար, որովհետեւ դրա ամեն ծառը նրա ձեռքով էր տնկված: Արեւոտ եղանակներին առավոտյան շուտ արթնանում էր, գնում այգին, իր ձեռքով խնամում, ջրում, այնուհետեւ գայիս պատրաստվում աշխատանքի գնալուն»,- հիշում է Մարիամը:

Արայիկ Գրիգորյանի կինը՝ Արմինե Թորոսյանը նշում է, որ նա միշտ ուզում էր ԱԱԾ համակարգում աշխատել, դպրոցական տարիներից էլ սպորտի, հատկապես ֆուտբոլի նկատմամբ հետաքրքրություն ուներ: Երեւանի ֆիզկուլտուրայի ինստիտուտում սովորել էլ պայմանավորված էր ԱԱԾ-ում աշխատանքի ընդունվելու ցանկությամբ: Ավարտելուց հետո, 1995 թվականի դեկտեմբերի 4-ին մասնակցել է ՀՀ Ազգային անվտանգության Նախարարության բարձրագույն դասընթացները եւ այն ավարտել 1996թ. հունիսի 15-ին:

«Շատ էր աշխատում, եւ այսքան տարիներին չեմ հիշում գեթ մի օր, որ ինքը երկարատեւ աշխատանքային արձակուրդ գնար: Նրա արձակուրդը մեկ-երկու օր էր, եւ երբեւէ երկու-երեք օրից ավելի Արցախից չէր բացակայել: Ինձ թվում է՝ դա պայմանավորված էր նաե նրանով, որ

տոնական դիրքին, իր աշխատակիցների հետ գեներալ ձեռքին համառ պայքար է մղել թշնամու դեմ:

Իհարկե, նման մասնագիտական ունակություններով, կոչումով մարդուն ռազմաճակատ ուղարկելն այնքան էր արդարացված չէր, եւ Արցախի Հանրապետությունն ավելի շատ կշահեր, եթե նա կենդանի լիներ եւ թիկունքում կոնկրետ լիազորություններ իրագործեր: Բայց, հարազատների խոսքով, Արցախի նկատմամբ նվիրվածությունն այդ ձեռով է փորձել արտահայտել: «Ասում էինք, որ դա քո տեղը չէ, բայց նրա մտա արժանապատվության զգացումն այնքան մեծ էր, որ մեկնել է ռազմաճակատ: Ամբողջ ռազմաճակատի երկայնքով մասնակցել է ռազմական գործողությունների, նույնիսկ մի քանի օր չկարողացանք հետը խոսել: Պարզվել է, որ հոկտեմբերի 4-ին իր ծառայակիցների հետ շրջափակման մեջ է հայտնվել: Առաջնագիծ մեկնելու պահին նա համակարգի միակ գեներալ-մայորն էր, որ անմիջական մասնակցություն է ունեցել մարտական գործողություններին: Անմիջապես խրամատում էր՝ զինվորների մոտ: Կան գյուղեր, որոնք հայկական են մնացել հենց իր եւ իր ծառայակիցների դրսեւորած խիզախության շնորհիվ»,- ասում է դուստրը: Նա հիշում է, որ հայրը պատերազմի ժամանակ միշտ թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու մասին էր խոսում. «Իր մահից հետո, իհարկե, շատ դժվար էր նորից վերադառնալ գիտական գործունեության: Բայց յուրաքանչյուր առավոտ արթնանալիս մտածում եմ, որ դա անում եմ նրա համար ու յուրաքանչյուր օր փորձում եմ ապրել այն արժեքներով, որը նա է սերմանել: Շատ դժվար է, բայց փորձում ենք հանուն նրա ապրել»:

Պատերազմի օրերին հիմնականում լավատես էր, բայց վերջին օրերին հարազատները նրա ձայնի մեջ տխուր երանգներ են նկատել: Պատերազմից երեք օր առաջ ասել էր, որ գրահաբեռնվող հագնելիս կնուկի խաչը խրամատում կորցրել է: «Լուսացույցով փնտրել են ու չեն գտել: Ինքը հավատացյալ էր ու կնքվելուց հետո խաչը չէր հանում: Ասացի՝ բան չկա, նորը կգտնեք, բայց իմ սրտում էլ մի բան փոխվեց, վատ նշան էր»,- պատմում է Արմինե Թորոսյանը:

«Վերջին անգամ խոսել եմ նոյեմբերի 4-ի երեկոյան: Ասացի՝ երեւի անքուն ես, ձայնդ լավ չի, չպատասխանեք: Ասացի՝ լավ, վաղն առավոտյան կգանգեմ»,- ամուսնու հետ վերջին խոսակցությունը հիշում է կինը: «Առավոտյան գանգերին չի պատասխանել: Մտածեցինք՝ երեւի հարմար չէր, որովհետեւ այդպիսի դեպքեր էլի են եղել: Հետո քույրիկս գանգեց իր ամուսնուն, վերջինս ասաց, որ գոհվել է: Դրանից հետո մեր կյանքը բաժանվել է միևնույն նոյեմբերի 5-ը եւ դրանից հետո»,- ցավով նշում է Մարիամը:

«Եղել է համարյա բոլոր ուղղություններում՝ Հադրութից մինչեւ Եղնիկներ: Վերջին օրերին կռվել է Շոշ-Աղ-Նախ պաշտպանական գծի հատվածում, որտեղ էլ նոյեմբերի 5-ին գեներալ-մայոր Սիրգոյանի հետ մարտական խնդիր կատարելիս գոհվել է: Մենք պարբերաբար իրար տարբեր հատվածներում հանդիպում էինք, ինքը միշտ լավատես էր, անձնակազմին հույս էր ներշնչում թե ռազմահայրենասիրական գաղափարներով էլ թե իր արհեստավարժությամբ: Նաե իրեն պահում էր որպես սովորական զինվոր, հայրենիքի պաշտպան, մյուս բոլոր ծառայողների հետ իր խնդիրներն էր կատարում»,- ասում է գործընկերներից մեկը:

Արայիկ Գրիգորյանի հուղարկավորությունը տեղի է ունեցել 2020 թվականի նոյեմբերի 7-ին, մայրաքաղաք Երեւանում, Եռաբլուր զինվորական պանթեոնում: 2021 թվականի նոյեմբերի 1-ին Արայիկ Սերգեյի Գրիգորյանին հետմահու շնորհել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչում:

«Մայրիկը չէր ուզում Արցախում մնալ, քանի որ հայրիկը Եռաբլուրում է թաղված ու շատ ենք գնում Երեւան: Ես ուզում եմ մնալ Արցախում, մայրիկն էլ է այստեղ: Մենք հասկանում ենք, որ մեծ է հայրիկի ներդրումն Արցախի Հանրապետության կայացման գործում, եւ մեծ ցավ կապրենք, որ այնքան ներդրած ենեղիս ու նաե այսպես կիսատ կյանքերը իզուր լինեն: Յուրաքանչյուրս պետք է, զսպելով մեր արցունքները, կոկորդում խեղդելով ցավը, փորձենք որեւէ ձեռով նպաստ բերել: Ամեն մարդ իր ոլորտում փորձի նպաստել Արցախի Հանրապետությանը, նրա անվտանգ պայագային: Եվ մեր իրավիճակում գտնվողներին խորհուրդ ենք տալիս ապրել նրանց հիշատակի համար եւ փորձել ինչ-որ գործով նպաստ բերել Արցախին»,- խոսքը եզրափակում է Արցախի հերոսի դուստրը:

«Արցախի հերոս» կոչման արժանանալը գնահատական է Արայիկ Գրիգորյանի գաղտնի սխրանքների եւ կատարած այն անձնվեր աշխատանքի, որն ահռելի էր եւ նախքան պատերազմը, եւ դրա ընթացքում: Նա Արցախի հերոսի դասական օրինակ է եւ ուղենիշ կլինի ԱՀ մարմիններում ծառայողների համար:



Կարելոր են ինչպես վարորդների, այնպե՛լ էլ հետիոտների կարգապահությունը

Վերջին ժամանակներում Ստեփանակերտում հաճախակի են դարձել խցանումները, հատկապես առափոյան եւ կեսօրին՝ օրվա պիկ ժամերին:

Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Ստեփանակերտում փողոցները չեն փոխվել, սակայն աճել է այդ փողոցներով երթեւեկող մեքենաների թիվը, եւ գնալով՝ այդ աճի տեմպերը չեն նվազում: Դա էլ պայմանավորված է Արցախի բռնազավթված տարածքներից մարդկանց տեղահանման արդյունքում Ստեփանակերտի բնակչության թվի եւ անընդհատ ներկրվող մեքենաների աճով:

Պատերազմից հետո երթեւեկության կազմակերպման, խցանումների վերացման եւ Ստեփանակերտի փողոցների ծանրաբեռնվածությունը նվազեցման ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին «Ապառաժ»-ը գրուցել է ԱՅ ներքին գործերի նախարարության ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության փոխգնդապետ Մավրիկ Նախրյանի հետ:

- Պարոն Նախրյան, պատերազմից հետո ի՞նչ աշխատանքներ են իրականացվել երթեւեկության կազմակերպման գործընթացում:

- 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Յանրապետության դեմ սանձազերծված պատերազմն իր բացասական հետեւանքներն է թողել նաեւ ճանապարհային երթեւեկության ոլորտում: Վնասվել են մեծ թվով ճանապարհային նշաններ, լուսացույցային օբյեկտների հեռակառավարման սարքեր եւ ճանապարհահինժեներական կառույցներ, որոնք 2021 թվականի ընթացքում վերականգնվել են ամբողջությամբ: Անվտանգ ճանապարհային երթեւեկություն կազմակերպելու նպատակով միայն 2021 թվականի ընթացքում հանրապետության տարածքում փոխարինվել կամ տեղադրվել են 232 ճանապարհային նշաններ, այդ թվում՝ արագության սահմանափակման եւ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում բեռնատար տրանսպորտային միջոցների երթեւեկությունն արգելող, որոշ խաչմերուկներում հին լուսացույցային օբյեկտները փոխարինվել են ժամանակակից տրանսպորտային եւ հետիոտնային թվատախտակներով լուսացույցային օբյեկտներով:

- Երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ են իրականացվում:

- Ծանապարհային ոստիկանության ամենօրյա ծառայությունը միտված է երթեւեկության անվտանգության ապահովմանը: Բացի այդ, պարբերաբար կազմակերպվում են ստուգայցեր (ուժեղացված ծառայություն), իրականացվում են ծածուկ եւ խառը ծառայություն՝ ծառայության մեջ ընդգրկված անձնակազմի տեսադաշտից դուրս կատարվող իրավախախտումների նախապահման, կանխման եւ հայտնաբերման նպատակով:

Ծանապարհային ոստիկանության եւ ոստիկանության այլ ստորաբաժանումների համատեղ ուժերով կազմակերպվում են «Օրինապաշտ հետիոտն», «Կարգազանց վարորդ» եւ այլ տիպի կանխարգելիչ միջոցառումներ:

Ծանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման, ճանապարհային անվտանգ երթեւեկության քարոզչության ուղղությամբ, ԱՅ ոստիկանության ՃՈ եւ ՅԿԼ ծառայության հետ համատեղ, 2021 թվականի ընթացքում պատրաստվել, լուսաբանվել են «Չզուլաջի՛ր ավտոմեքենայից» եւ «Մի՛ խախտիր» թեմաներով տեսահոլովակներ, որոնց ցուցադրումը շարունակական բնույթ կկրի:

Ոստիկանության «02» հաղորդաշարով, ոստիկանության Ֆեյսբուքյան էջով եւ հանրային հեռուստատեսության միջոցով հնչեցված կոչերն ու նախագրուշացումները եւս նպաստում են երթեւեկության անվտանգության մակարդակի բարձրացմանը:

- Հետիոտների կողմից վթարային իրավիճակների ստեղծումը կանխարգելելու նպատակով ինչպիսի՞ միջոցառումներ են իրականացվում:

- Հետիոտների մասնակցությամբ հնարավոր ճանապարհատրանսպորտային պատահարները կանխարգելելու համար, որպես նախագրուշացնող գործողություն, շրջիկ պարեկային ծառայությանը զուգահեռ՝ ճանապարհային ոստիկանության ծառայողները

բարձրախոսի միջոցով հետիոտներին իրազեկում են ճանապարհային երթեւեկության կանոնների պահպանման, այդ թվում՝ հետիոտնային անցումներով ճանապարհը հատելու խիստ անհրաժեշտության մասին:

Հետիոտների վրաերթը բացառելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով հանրապետությունում ավելացրել ենք արհեստական անհարթությունների քանակը, որոնք համատեղված են հետիոտնային անցումներով եւ կահավորված են ճանապարհային նշաններով եւ գծանշումներով:

Բացի վերը նշվածից, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, հետիոտների կարգապահությունը բարձրացնելու ուղղված, արդեն ավանդույթ դարձած՝ կազմակերպվում է տասնօրյակ «Օրինապաշտ հետիոտն» կարգախոսով, որի շրջանակներում ԱՅ ոստիկանության գրեթե ողջ անձնակազմը ներգրավված է լինում առավոտյան, կեսօրին եւ երեկոյան ծանրաբեռնված ժամերին հետիոտնային անցումների հարակից ճանապարհահատվածներում ծառայության իրականացմանը հետիոտների կողմից հետիոտնային անցումներից դուրս ճանապարհ հատելու դեպքերը բացառելու համար:



- Համաձայն էք այն մտքի հետ, որ վարորդներն ավելի կարգապահ են, քան հետիոտները:

- Ծանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառում կարելոր են ինչպես վարորդների, այնպե՛լ էլ հետիոտների կարգապահությունը, եւ իրավախախտումների քանակը, անկախ ճանապարհային երթեւեկության մասնակցի կարգավիճակից, խիստ փոխկապակցված է երթեւեկության մասնակիցների՝ վարորդների, ուղեւորների եւ հետիոտների իրավագիտակցության մակարդակով: Օրինակ՝ կարգապահ վարորդը հետիոտնի կարգավիճակում կարող է լինել կարգազանց, եւ հակառակը: Այդ իսկ պատճառով հստակ գնահատական տալը՝ վարորդներն են առավել կարգապահ, թե հետիոտները, դժվար է եւ խիստ հարաբերական:

- Ստեփանակերտում շատացել են խցանումները: Ինչի՞ հետ է սա պայմանավորված: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում խցանումներից խուսափելու համար:

- Ստեփանակերտում ունենք ծանրաբեռնված երթեւեկություն, որը պայմանավորված է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին մեր հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետեւանքով մշտական բնակության վայրից տեղահանված մեր հայրենակիցների՝ մայրաքաղաքում բնակություն հաստատելու, Ստեփանակերտ քաղաքի ճանապարհների թողունակությունից եւ Արցախի Յանրապետության Յայաստանի Յանրապետությունից ու այլ պետություններից ներմուծվող տրանսպորտային միջոցների քանակի աճից: Միայն 2021 թվականի ընթացքում Արցախի Յանրապետություն է ներմուծվել 4623 տրանսպորտային միջոց: Փողոցների թողունակության աստիճանը հնարավորինս բարձրացնելու նպատակով կատարված հետազոտությունների արդյունքում Արցախի Յանրապետության ճանապարհային ոստիկանությունը Ստեփանակերտի քաղաքապետարան եւ քաղաքաշինության նախարարություն է ներկայացրել առաջարկությունների փաթեթ, որի համաձայն՝ առաջարկվում է նեղ փողոցների լայնացում, փակ փողոցների

շահագործում, ոչ բարվոք փողոցների բարեկարգում, կանգառ-գրպանիկների կառուցում, որոնց մի մասն արդեն իրականացվել են, եւ առաջարկվող աշխատանքների ամբողջությամբ կատարման դեպքում կունենանք համեմատաբար անխցան, անվտանգ երթեւեկություն:

- Հասարակության մեջ տարածված է այն կարծիքը, որ Արցախում օրենքը չի գործում բոլորի համար եւ տուգանքները չեն գործում արտոնյալների համար: Արդյո՞ք դա այդպես է:

- Ոչ, ճանապարհային ոստիկանությունը գործել է գործում է հետեւյալ կերպ՝ օրենքի առջեւ բոլորը հավասար են: Բացառվում է ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից խտրական վերաբերմունք վարորդների եւ, առհասարակ, երթեւեկության մասնակիցների նկատմամբ:

- 2020թ. նախագահական ընտրություններից հետո նախագահ Ա.Հարությունյանը ճանապարհատրանսպորտային վթարների աճով պայմանավորված՝ հայտարարել էր խստացված ռեժիմի անցման մասին: Արդյո՞ք դրանից հետո կրճատվել են նման դեպքերը:

- 2020 եւ 2021 թվականների վիճակագրական տվյալների համաձայն՝ նյութական եւ մարմնական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի աճ է գրանցվել, որը պայմանավորված էր ոչ թե լիարժեք խստացված ռեժիմով ծառայության իրականացման բացակայությամբ, այլ հետպատերազմյան ժամանակաշրջանում հասարակության մոտ առաջացած հոգեվիճակով, տրամադրությամբ, ինչու է՞ նաեւ տրանսպորտային միջոցների քանակի շեշտակի աճով ճանապարհների սահմանափակ թողունակության պայմաններում:

- Ստեփանակերտում կառուցվում են նոր բազմաբնակարան շենքեր: Արդյո՞ք խնդիր չի առաջանա մեքենաների կայանման հարցում, քանի որ արդեն հիմա նկատվում են մեքենաների կայանման խնդիրներ:

- Կառուցվող բազմաբնակարան շենքերի բնակիչների կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների համար նախատեսված է կայանատեղիներ, նաեւ՝ հաշվի առնելով այն, որ այդ շենքերի ապագա բնակիչների մեծ մասն արդեն իսկ բնակվում են քաղաք Ստեփանակերտում եւ, բնականաբար, նրանց կողմից տրանսպորտային միջոցները եւս շահագործվում են Ստեփանակերտում, ուստի գտնում ենք՝ տրանսպորտային միջոցների կայանման խնդրի աճ չենք ունենա:

- Նախատեսվո՞ւմ է արդյոք դեպի բռնազավթված տարածքներ տանող ճանապարհներին նախագրուշացնող նշանների տեղադրում:

- Ծանապարհային երթեւեկության կանոններով նախատեսված ճանապարհային նշան, որը կտեղեկացնի հետագա երթեւեկության ընթացքում բռնազավթված տարածքներում հայտվելու եւ դրանից բխող բոլոր վտանգների մասին, գոյություն չունի: Սակայն, հակառակորդի կողմից վերահսկվող տարածքներում հայտվելու դեպքերը բացառելու համար գործադրված են ավելի էֆեկտիվ միջոցներ՝ տեղադրված են բետոնե արգելապատնեշներ, արգելափակոցներ, իսկ որոշ տեղերում առկա են ոստիկանության հսկիչ կետեր:

- Արդյո՞ք փոփոխության է ենթարկվել վարորդական իրավունքի տրամադրման կարգը: Որո՞նք են այդ փոփոխությունները:

- Նախկինում վարորդական իրավունքի վկայական ստանալու համար հաստատված կարգի համաձայն՝ տեսական եւ գործնական որակավորման քննությունները դրական չհանձնած անձը կարող էր հաջորդիվ աշխատանքային օրերին մասնակցել այդ քննություններին: Եստակապ ուրակավորման քննությունները բաղկացած էին հոգեբանական թեստից՝ 2-5 պատասխան պարունակող 3 հարցից, եւ գիտելիքների ստուգման թեստից՝ 2-5 պատասխան պարունակող 10 հարցից:

2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 1414-Ն որոշման համաձայն՝ փոփոխության է ենթարկվել վարորդական իրավունքի վկայականների տրամադրման կարգը:

Պետական միջոցների կամայական վատնում

Հաղորդի շրջանի Հին թաղեր եւ Խծաբերդ բնակավայրերի հանձնումից մի քանի օր անց ԱՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար նշանակված, նախկինում ընդդիմադիր գործիչ Հայկ Խանումյանը պարբերաբար հայտնվում է չարաշահումների, պետությանը հասցված վնասների գործերով տարբեր դատական գործընթացների առանցքում: Դրանցից վերջինը վերաբերում է «Արցախատառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մհեր Արսյանին աշխատանքից ազատե-

նաբերում, որոնք իրականում չկան, եւ դա հիմք է հանդիսանում «կազմակերպությանը պատճառած վնասի» հիմքով Մհեր Արսյանին աշխատանքից ազատելու համար: Մհեր Արսյանի փոխարեն Հայկ Խանումյանը նշանակում է նույն Արտակ Ներսիսյանին: «Դիմում ենք դատարան, դատական կարգով ապացուցում ենք, որ Մհերը կոպեկի վնաս անգամ չի պատճառել, ավելին՝ ընթացակարգային այլ խախտումներ ենք արձանագրում եւ ապացուցում, որ հրամանը ապօրինի է կայացվել, ուստի անվավեր է: Ծիշտ է, Առաջին ատյանի դատարանը մերժում է մեր հայցը, բայց այն բողոքարկում ենք Վերաքննիչ դատարանում, որը լրիվությամբ բավարարում է հայցը: Վերաքննիչը Առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանում է, կայացնում է նոր դատական ակտ, Մհերին վերականգնում աշխատանքի, հարկադիր պարապուրդի, փաստաբանի խելամիտ վարձատրություն գանձում եւ այլն»,- գործը ընթացքի մասին «Ապառաժ»-ին պատմում է Ռ. Երիցյանը:



լուն: Մեկ տարուց ավելի տեւած դատական գործընթացներից հետո, 2022թ. մարտի 9-ին Մհեր Արսյանը վերականգնվել է աշխատանքի: Նրա պաշտպան, փաստաբան Ռոման Երիցյանը նշում է, որ Հայկ Խանումյանի հակաօրինական որոշման հետեւանքով պետությանը պատճառվել է 2-2,5 մլն դրամի չափով վնաս՝ բոլորիս հաշվին: Հատկապես առկա բազմաթիվ խնդիրների պարագայում այդ գումարները կարելի էր ավելի արդյունավետ օգտագործել, այլ ոչ թե պետական միջոցները մսխել:

2020թ. օգոստոսի 19-ից մինչեւ 2021թ. մարտի 12-ը Մհեր Արսյանը «Արցախատառ» ՊՈԱԿ-ի տնօրենն էր: Փաստաբանը պատմում է, որ նախքան պաշտոնից ազատվելու մասին որոշման կայացումը Հ. Խանումյանը Մ. Արսյանին կանչում է, առաջարկում աշխատանքից ազատման դիմում գրել, իսկ ինչո՞ւ հարցին պատասխանում է՝ որովհետեւ այնտեղ պետք է իմ թիմակիցն աշխատի: Մհերը չի համաձայնում, այնուհետեւ Խանումյանը զանգում է նրան ու ասում՝ արի մոռանանք այս խոսակցությունը: Դրանից հետո ունի Արտակ Ներսիսյան, որը հասարակական հիմունքներով նախարարի օգնականն էր, ստեղծում է աշխատանքային խումբ, որը պետք է «Արցախատառ»-ի նկատմամբ ստուգումներ իրականացներ:

Արտակ Ներսիսյանը նշանակվում է աշխատանքային խմբի ղեկավար: Խումբն ինչ-որ ենթադրյալ խախտումներ է հայտ-

նաբերում, որոնք իրականում չկան, եւ դա հիմք է հանդիսանում «կազմակերպությանը պատճառած վնասի» հիմքով Մհեր Արսյանին աշխատանքից ազատելու համար: Մհեր Արսյանի փոխարեն Հայկ Խանումյանը նշանակում է նույն Արտակ Ներսիսյանին: «Դիմում ենք դատարան, դատական կարգով ապացուցում ենք, որ Մհերը կոպեկի վնաս անգամ չի պատճառել, ավելին՝ ընթացակարգային այլ խախտումներ ենք արձանագրում եւ ապացուցում, որ հրամանը ապօրինի է կայացվել, ուստի անվավեր է: Ծիշտ է, Առաջին ատյանի դատարանը մերժում է մեր հայցը, բայց այն բողոքարկում ենք Վերաքննիչ դատարանում, որը լրիվությամբ բավարարում է հայցը: Վերաքննիչը Առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանում է, կայացնում է նոր դատական ակտ, Մհերին վերականգնում աշխատանքի, հարկադիր պարապուրդի, փաստաբանի խելամիտ վարձատրություն գանձում եւ այլն»,- գործը ընթացքի մասին «Ապառաժ»-ին պատմում է Ռ. Երիցյանը:

Նրա խոսքով՝ ԱՀ ՏԿԵ նախարարությունը վճիռը բողոքարկում է Գերագույն դատարանում, Վերաքննիչի դատական նիստին չմասնակցելը բացատրում են կազմակերպության իրավաբանական վարչության պետի արձակուրդում գտնվելու հանգամանքով: Բայց դատարանին դրա վերաբերյալ փաստաթուղթ չեն ներկայացնում: Գերագույն դատարանը մերժում է բողոքը, Վերաքննիչ դատարանի դատական ակտը մնում է ուժի մեջ: «2020թ. փետրվարի 10-ից նրանք պարտավոր են Մհերին վերականգնելու աշխատանքի եւ կատարելու մյուս որոշումները, բայց չեն կատարում»,- ասում է փաստաբանը:

Դատարանի որոշումներն ի կատար ածելու փոխարեն փետրվարի 16-ին իր ֆեյսբուքյան էջում Հայկ Խանումյանը գրառում է կատարում տվյալ դատական գործընթացի մասին եւ կասկած հայտնում բարձրագույն դատական ատյանի անաչառության մասին: «Ավելիայտ է, որ այս որոշումն ընդունելիս Գերագույն դատարանի անդամները գործել են կաշկանդված. հավանաբար գործել են իրենց դատավորի պաշտոնում առաջարկած գործիչների թելադրանքով: Իրավական առումով անգրագետ այս որոշման այլ տրամաբանական բացատրություն չկա: «Արցախատառ» չարաշահումների գործով, մեկ տարի է, զարմանալի անգոր-

ծության են մատնված ԱՀ ընչազանց կոմիտեն եւ ԱՀ դատախազությունը: Այս անգործության պատճառներն ինձ համար ակնհայտ են, բայց չէի ուզեմ դրանց մասին հրապարակայնորեն խոսել: «Արցախատառ» գործին կառավարության ներսում տարբեր արձագանքներն ինձ համար եւս ցուցիչ են՝ հասկանալու այս ՊՈԱԿ-ում տեղի ունեցած ամենաթողության պատճառները»,- իր էջում գրել է Հ. Խանումյանը՝ նշելով, որ նախարարությունը կատարելու է դատարանի որոշումն եւ «Արցախատառ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում վերականգնելու է նախկին տնօրենին»,- գրել է նա:

Հայկ Խանումյանի հրապարակման վերաբերյալ Ռոման Երիցյանը հաղորդում է ներկայացնում գլխավոր դատախազությանը: Մարտի 9-ին դատախազությունից ստանում է Խանումյանի բացատրությունը, որում վերջինս խոստովանում է, որ որեւէ փաստ կամ հստակ հիմնավորում չունի դատավորների՝ «թելադրանքով գործելու» վերաբերյալ: «Հ. Խանումյանի բացատրությունը ոչ միայն ինձ, այլ նաեւ ցանկացած ընթերցողի համար ժպիտ եւ միեւնույն ժամանակ զայրույթ կարող է առաջացնել: Եթե որեւէ հիմք չունես, ինչո՞ւ ես հանրությանը ապակողմորոշում քո տիեզերական մասշտաբի ենթադրություններով եւ անհիմն կարծիքներով»,- զարմանում է փաստաբանը:

ԱՀ ՏԿԵ նախարարի՝ 2022 թվականի մարտի 8-ի հրամանով վերջապես ի կատար է ածվել ԱՀ վերաքննիչ դատարանի որոշումը՝ Մհեր Արսյանին աշխատանքի վերականգնելու վերաբերյալ: Այսինքն, մեկ օր էլ, եւ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի չկատարման համար նախատեսված քրեական պատասխանատվությունը նախարարի համար կդառնար անխուսափելի:

Ռ. Երիցյանն անընդունելի է համարում գործադիր մարմնի ներկայացուցչի կողմից դատական մարմնի հեղինակությունը, անաչառությունը, օբյեկտիվությունը կասկածի տակ դնելը եւ տեղեկացնում, որ Բարձրագույն դատական մարմինը դիմել է Եթիկայի բարձրագույն հանձնաժողովին եւ խնդրել համապատասխան միջոցներ ձեռնարկել: Նրա խոսքով՝ միայն քրեական պատասխանատվությունից խուսափելու համար է Հ. Խանումյանը իրագործել դատարանի որոշումը:

Նա շեշտում է՝ հաղթել ենք, որովհետեւ հրամանը եղել է ապօրինի, իրավաբանորեն անգրագետ: Սակայն հետաքրքրական է, որ ԱՀ ՏԿԵ նախարարը շարունակում է իր նախկին գործելածը:

ԱՀ ՏԿԵ նախարարը վերջերս պաշտոնից ազատել է «Ստեփանակերտի օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենին, ում խնդրանքի հիման վրա հայցադիմում է ներկայացվել Դատարան՝ անհատական

իրավական ակտն անվավեր ճանաչելու եւ հետեւանքները կիրառելու, այսինքն՝ աշխատանքի վերականգնելու, հարկադիր պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձն ու դատական ծախսերը գանձելու պահանջի մասին:

«Հարկ է ուշադրություն դարձնել, որ կոնկրետ դեպքում ոչնչով չպայմանավորված, ավելի ճիշտ՝ նախարարի քմահաճույքով եւ կամայականությամբ մոտ 8 տարի տնօրենի պաշտոնը զբաղեցնող անձի կամքին հակառակ լուծվել է վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչն ըստ էության դուրս է «Իրավական պետություն» հասկացության եւ տրամաբանության շրջանակներից:

Կրկնակի ուշագրավ է նաեւ այն, որ «Ստեփանակերտի օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենին պաշտոնից ազատելու հրամանը կայացվել է Մհեր Արսյանի վերաբերյալ կայացված հրամանը վերջնական հաշվով դատական կարգով անվավեր ճանաչվելու զուգահեռ, ինչը խոսում է այն մասին, որ կոնկրետ նախարարի համար միեւնույն է, թե իր անօրեն գործելածով պայմանավորված՝ որքան չափի եւ ինչ տիպի վնաս է պատճառվելու պետությանը»,- իր ֆեյսբուքյան էջում գրել է Ռ. Երիցյանը:

«Իմ փաստաբանական գործունեության ընթացքում դիմել են հազարավոր քաղաքացիներ, ովքեր բողոքել են ՏԿԵ նախարարի՝ վարձակալության պայմանագրերի, տարիանվաճների տեղավորման, աշխատանքային վեճերով: Էլ չեմ խոսում քրեական գործերի մասին, որ հարուցված են ՏԿԵ աշխատակիցների նկատմամբ: Խանումյանն այժմ դրսևորում է կամայականություն: Պետական պաշտոնատար անձը իրավունք չունի կամայականությամբ զբաղվել: Նորմալ չէ, որ երբ թշնամին ամեն օր կրակում է, պետությունը ստիպված է նախարարի քմահաճույքների պատճառով քաղաքացուն գումարներ փոխհատուցել»,- ասում է նա:

Անդրադառնալով գոնե պատերազմից հետո արդարության, օրենքի առջև բոլորի հավասարությունը պահելու մասին հարցին՝ փաստաբանը նկատում է, որ պատերազմը առիթ է դարձել անձնական հաշիվները մաքրելու համար. «Մհեր Արսյանին աշխատանքի վերականգնելու դատական ակտի մասին իրազեկվելով հանդերձ՝ ինքը Երիկ Օհանյանին ազատում է աշխատանքից, որովհետեւ այդ գումարները իր գրավից չի վճարում: Պետական պաշտոնյայի ցանկացած որոշում պետք է բխի պետության շահերից: Արդյո՞ք այդ որոշումները պետության շահերից են բխում»:

S. ԱՐԱՋԱՆՅԱՆ

Կարելուք են ինչպես վարորդների, այնպես էլ հետիոտների կարգապահությունը

6 ← Հիշյալ որոշման համաձայն՝ տեսական քննությունը դրական չհանձնած անձը կարող է կրկին մասնակցել տեսական քննությանը բացասական հանձնված քննության օրվանից ոչ շուտ, քան 7 օր անց, իսկ երկրորդ փորձը դրական չհանձնելու դեպքում՝ յուրաքանչյուր հաջորդ տեսական քննությանը կարող է մասնակցել բացասական հանձնված վերջին քննության օրվանից ոչ շուտ, քան մեկ ամիս անց, իսկ գործնական քննությունը դրական չհանձնած անձը կարող է կրկին մասնակցել գործնական քննությանը բացասական հանձնված քննության օրվանից ոչ շուտ, քան 7 օր անց, իսկ երկրորդ փորձը դրական չհանձնելու դեպքում՝ յուրաքանչյուր հաջորդ գործնական քննությանը կարող է մասնակցել բացասական հանձնված վերջին քննության օրվանից ոչ շուտ, քան մեկ ամիս անց: Տեսական դրական քննությունները բաղկացած են հոգեբանական թեստից՝ 2-5 պատասխան պարունակող 3

հարցից, եւ գիտելիքների ստուգման թեստից՝ 2-5 պատասխան պարունակող 20 հարցից:

-Ճանապարհատրանսպորտային պատահարների ինչպիսի՞ դինամիկա է նկատվում պատերազմից հետո:

- 2021 թվականի ընթացքում հանրապետության տարածքում գրանցվել է մարմնական վնասով 102 ճանապարհատրանսպորտային պատահար, որոնց հետեւանքով զոհվել է 16 եւ վիրավորվել՝ 113 մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 71 պատահարի, 17 զոհի եւ 70 վիրավորի դիմաց, իսկ նյութական վնասով՝ 1186 պատահար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 627 պատահարի դիմաց:

- Պատերազմի արդյունքում քաղաքացիների մի մասի տրանսպորտային միջոցները մնացել են բռնազավթված տարածքներում: Ինչպիսի՞ անվտանգության

միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի օրերից մի օր հայկական պետամբարանիչներով այդ տրանսպորտային միջոցներով թշնամիները չհայտնվեն մեր վերահսկողության տակ գտնվող տարածքներում:

- Պատերազմի ավարտից անմիջապես հետո Արցախի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ հակառակորդի վերահսկողության տակ անցած տարածքներում թողնված տրանսպորտային միջոցների տվյալների հավաքագրման վերաբերյալ, եւ հաշվառման քննական բաժնում գործել է թե՛ գիծ, որտեղ քաղաքացիների բանավոր եւ գրավոր հաղորդումների հիման վրա կազմվել է համապատասխան ցանկ, որոնք անվտանգության նկատառումներից ելնելով՝ տրամադրվել են հսկիչ-անցագրային կետերում ծառայություն իրականացնող ստորաբաժանումներին:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պայքար Արցախի վտանգված ժառանգության պահպանման համար

Փետրվարի 3-ին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Զարինովը հայտարարել է միջազգային փորձագագիտական աշխատանքային խումբ ստեղծելու մասին, որի նպատակը Արցախի օկուպացված տարածքներում հայկական պատմամշակութային ժառանգությունը ոչնչացնելն է եւ հուշարձանները աղվանացման ենթարկելը:

Ավելի վաղ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Հաղորդակցության Ծակուռի գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում նմանատիպ հայտարարություններ է արել՝ նշելով, որ «Հայերը ինչպես պղծել են մեր մզկիթները, այնպես էլ հին աղվանական տաճարներն են պղծել: Բայց մենք կվերականգնենք: Այս բոլոր գրությունները կեղծ են, ավելի ուշ ավելացված գրություններ են»:



Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր, պատմական գիտությունների դոկտոր Վահրամ Բալայանը, մեկնաբանելով ադրբեջանական վանդալիզմի դրսևորումները, նշել է. «Ադրբեջանի հավակնությունները հայկական տարածքների նկատմամբ՝ նորություն չեն: Դեռևս 20-րդ դարի սկզբին, երբ ձեռնարկվեց մուսավաթական Ադրբեջանը, այդ հավակնությունները ոչ միայն մեծացել են, այլ նաև կազմակերպված բնույթ են ստացել, ինչը շարունակվել է նաև խորհրդային ժամանակահատվածում»:

70-ական թվականներին վերսկսվեց հերթական, այսպես կոչված, աղվանացման ծրագիրը, երբ փորձ էր արվում ԼՂԻՄ եւ հարակից հայկական տարածքների պատմամշակութային արժեքները ներկայացնել աղվանական:

«Պիտի նկատել է, որ ոչ միայն հայ, այլև օտարագրի շատ գիտնականներ անդրադարձել են այս հարցին: Դեռևս հնագույն ժամանակներում հույն, հռոմեացի պատմիչները իրենց աղբյուրագիտական աշխատություններում փաստել են, որ Կուր գետի աջափնյակը հայկական է եղել, եւ զավեշտալի են Ադրբեջանի պնդումները հայերի կողմից այդ հետքերի վերացման եւ աղվանացման շուրջ: Այդ աղբյուրագիտական նյութերում կան նաև եկեղեցիների, վանական հայրերի դարերով եկած տոհմերի ծագումնաբանությունը: Այս բոլոր գործողությունները մեր պատմամշակութային ժառանգությունը սեփականացնելն է, եւ մենք պետք է մեր բոլոր ուժերով պայքարենք դրա դեմ» - ավելացրեց Վահրամ Բալայանը: Պաշտոնական տվյալներով՝ 2020 թվականի պատերազմի հետեւանցով Ադրբեջանի վերահսկողության տակ են մնացել առնվազն 1456 նշանավոր հուշարձաններ, այդ թվում՝ 161 վանքեր եւ եկեղեցիներ, 591 խաչքարեր, 345 տապանաքարեր, դամբարաններ, գերեզմանոցներ, 208 սրբավայրեր, 10 պետական եւ 2 մասնավոր թանգարաններ:

Արցախի Հանրապետության նախագահի խորհրդական Լուսինե Ղարախանյանը, ով պատերազմի ժամանակ եւ հետո զբաղեցնում էր կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի պաշտոնը, նշել է. «Ադրբեջանը պետական ամենաբարձր մակարդակով պայքար է տանում Արցախի պատմամշակութային ժառանգության դեմ՝ մի կողմից հայկական ծագման քրիստոնեական արժեքները ոչնչացնելով, մյուս կողմից՝ յուրացմամբ, դրանք վերագրելով ալբանական մշակույթին, իսկ դրանցից՝ ադրբեջանականին: Այսինքն, ինչպես Համլետ Պետրոսյանն է ասում, սա միջ-

նորդավորված յուրացում է: Պետական մակարդակով այսպիսի քաղաքականության իրականացումը մշակութային եղանակ է եւ հոգեւոր էքսպանսիա, որի արդյունքում անտեսվում են միջազգային բոլոր օրենքները, որոնք կյանքի են կոչվել համամարդկային պատմամշակութային ժառանգությունը պահպանելու ուղղությամբ: Այս մշակութային վանդալիզմը կանխելու նպատակով մենք կոչ ենք հղել միջազգային կազմակերպություններին գործնական քայլեր ձեռնարկել եւ կանխել Ադրբեջանի նախագահի մակարդակով իրականացված ու մեր հայրենիքի օկուպացված հատվածում նոր թափով ձեռնարկված մշակութային ցեղասպանությունը, բայց փաստն այն է, որ այսօր Սուրբ Ղազանչեցոց ամենափրկիչ եկեղեցին այլանդակված է եւ այլանդակվում է»:

Նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրից մի քանի օր հետո ադրբեջանցի օգտատերերից մեկի իրապարակած նյութում Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին արդեն իսկ ավերված վիճակում էր, հատկապես գմբեթն ու զանգակատունը: Փաստերի հետաքննության հարթակի (FIP) տվյալներով՝ այս տեղեկատվության աղբյուրը Ֆեյսբուքյան ադրբեջանցի օգտատեր Սեփինկ Ասադուլաեւն է:

«Հրադադարի հաստատումից ի վեր հիմնահատակ ոչնչացվել է Մեխակավանի սուրբ Աստվածածին եկեղեցին, Հաղորդակցության Առաքել գյուղի խաչքարը, վայրագություններ են տեղի ունենում հատկապես Արցախյան ազատամարտի հերոսներին նվիրված կոթողների, տապանաքարերի հետ, քանդվել է Շուշիի Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված հուշարձանը, հայրենական մեծ պատերազմի հուշարձանները: Սա էթնոցի է եւ վտանգավոր գործընթաց է: Կարելի է ասել՝ պատերազմը շարունակվում է, քանի որ վերացնել մշակույթը նշանակում է իսպառ վերացնել ինքնության, ազգային ինքնագիտակցության, արժեքների համակարգի բոլոր ատրիբուտները, որովհետեւ մենք բոլոր այդ կոթողների հետ հուզական, վարքային կապեր ունենք»,- ասաց Լ. Ղարախանյանը:

Նշենք, որ դեպտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը «Ռասսայական խորականության բոլոր ձեռքերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի շրջանակներում հաստատել է. «Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու ազգությամբ եւ էթնիկ հայերին թիրախավորող ռասսայական ատելության եւ խտրականության հրահրումը եւ խթանումը, ներառյալ՝ Ադրբեջանի պաշտոնյաների եւ պետական հաստատությունների կողմից: Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու եւ պատժելու վանդալիզմի ու պղծման գործողությունները՝ ուղղված հայկական մշակութային ժառանգության, ներառյալ՝ եկեղեցիների եւ այլ պաշտամունքի վայրերի, հուշարձանների, տեսարժան վայրերի, գերեզմանատների եւ արտեֆակտների դեմ»:

Սակայն Լուսինե Ղարախանյանը այնքան էլ հավատ չի տածում միջազգային համապատասխան կառույցների հանդեպ:


«Որպես մտավորական, որպես պետական պաշտոնյա, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախկին նախարար՝ խորապես հիասթափված եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հակամարտության ժամանակ Ադրբեջանին ընտրելու իրողությունից: Սա անվստահության մթնոլորտ ձեւավորելու հիմնավոր պատճառ է համամարդկային մշակութային ժառանգությունը պահպանելու առաքելությամբ օժտված կազմակերպության հանդեպ»,- ավելացրեց նա:

Առանձնակի լավատեսությամբ չէ լցված նաև Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը: Վերջին մեկ տարվա ընթացքում թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի իշխանություններն օգտագործել են տարբեր գործիքակազմ ադրբեջանական գործողություններին հակազդելու համար: Չեկույցներ եւ նամակներ են ուղարկվել միջազգային կազմակերպություններին: Խնդրի վերաբերյալ պարբերաբար իրապարակային հայտարարություններ են արվել: Պատերազմի ավարտից մի քանի ամիս անց Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը իրապարակել է Ադրբեջանի կողմից Արցախում հայկական մշակութային ժառանգության վանդալիզմի դեպքերի վերաբերյալ զեկույց: Ինչպես նշեց Ստեփանյանը՝ «Մեր զեկույցի նպատակն էր ահագանգել միջազգային հան-

րությանը Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում հայկական մշակութային ժառանգությանը սպառնացող վտանգի մասին: Ցավոք, միջազգային հանրությունը մինչ օրս հստակ քայլեր չի ձեռնարկել, եւ սա է հիմնական պատճառներից մեկը, որ ադրբեջանական կողմն անարգել շարունակում է մեր հուշարձանները պղծելու եւ դրանց պատմությունը խեղաթյուրելու իր քաղաքականությունը:

Ադրբեջանի մշակույթի նախարարի հայտարարությունը, թե Ադրբեջանում ստեղծվում է աշխատանքային խումբ եկեղեցիներից հայերեն գրությունները հեռացնելու համար, ցույց է տալիս, որ Ադրբեջանն իր ցիսիկ պահվածքով համարձակվում է ընդդիմանալ միջազգային դատարանի որոշմանը: Նման քայլի մասին դատարանը կտեղեկացվի Ադրբեջանի կողմից, եւ մենք դատարանից կպահանջենք օգտագործել իր բոլոր գործիքները սեփական որոշումը կյանքի կոչելու համար: Միաժամանակ, մենք շարունակելու ենք աշխատել մշակութային հուշարձանների վիճակի մոնիտորինգի ուղղությամբ եւ հետեւողականորեն ահագանգելու ենք շարունակվող բոլոր հանցագործությունների մասին»:

ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի գրասենյակի ղեկավար Գասպար Կարապետյանը, ով տարիներ շարունակ եվրոպական տարբեր կառույցների ներկայացուցիչների մոտ բարձրացրել է Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության խնդիրները, նույնպես մեկնաբանել է. «Արցախում, մասնավորապես 2020 թվականի պատերազմից հետո հայկական մշակութային ժառանգության պահպանությունը մշտապես եղել է մեր ուշադրության կենտրոնում: Բոլորսերում տասնյակ որոշումներ կայացնողների հետ մեր վերջին բոլոր հանդիպումների ընթացքում, ինչպես ԵՄ մակարդակով, այնպես էլ ազգային մակարդակով, մենք շեշտում ենք Արցախի օկուպացված տարածքներում հայկական մշակութային ժառանգության ջնջման ադրբեջանական քաղաքականությունը, ինչպես նաև անհրաժեշտությունը դրա



դեմ ակտիվ պայքարելու համար: Մոտ ապագայում մենք մտադիր ենք կոնկրետ քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ, ինչպես նաև մոբիլիզացնել մեր կոմիտեները ողջ Եվրոպայում: ԵՄ-ն եւ համապատասխան միջազգային կազմակերպությունները բարոյական պարտավորություն ունեն արդյունավետ ճնշում գործադրելու Ադրբեջանի ավտորիտար ռեժիմի վրա՝ անհապաղ դադարեցնելու նրա ապականուցողական քաղաքականությունը, ներառյալ՝ մշակութային ցեղասպանությունը եւ պատմության կեղծումը»:

Հոդվածի անգլերեն տարբերակը իրապարակվել է Armenian weekly պարբերականում՝ 22.02.2022 թ.:

ԱՅ ԱՅ ԳԿՄԵՍ մշտական հանձնաժողովի փորձագետ Սիրանուշ Սարգսյան

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կոնույանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաև նյութեր, որոնցում արժարժված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պոլուկյան